

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵՐԳԵՅ ՄԵՂՐՅԱՆ

ՊԱՐԳԵՅՎԱԾ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ
ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍՎՐՔՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵՂՐՅԱՆ Ս. Գ.

**ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
(գիտազործնական մեկնաբանություն)**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2020**

ՀՏԴ 347
ԳՄԴ 67.404
Մ 586

**Երաշխավորվել է փապագրության ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Մեղրյան Ս. Գ.

Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ:

Մեղրյան Սերգեյ Գուրգենի

Մ 586 Պարզեցված ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում (գիտագործնական մեկնաբանություն): Եր., ԵՊՀ հրատ, 2019, 81 էջ:

Մենագրությունում ՀՀ և այլ երկրների քաղաքացիական դատավարության օրենսդրության, ինչպես նաև տեսական աղբյուրների և եվրոպական լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա վերլուծվել են ՀՀ քաղաքացիական դատավարությունում կիրառվող պարզեցված ընթացակարգերը:

Սույն հրատարակությունը կարող է օգտակար լինել իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, դասախոսների, փաստաբանների, դատավորների և դատական ծառայողների, ինչպես նաև քաղաքացիական դատավարության հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ՀՏԴ 347
ԳՄԴ 67.404

ISBN 978-5-8084-2439-5

© ԵՊՀ հրատ., 2020
© Մեղրյան Ս. Գ., 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՔԱՆ	4
I. ՀԵՌԱԿԱ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ	8
II. ՊԱՐՁԵՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹ.....	25
III. ԱՐԱԳԱՑՎԱԾ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ.....	48
IV. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹ	60

ՆԱԽԱԲԱՆ

Դատաիրավական բարեփոխումներ մի քանի փուլ անցած Հաստանի Հանրապետությունում արդարադատության մատչելիության և արդյունավետության հիմնախնդիրները դեռևս առավել արդիականներից են:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք (Սահմանադրություն, 61 հոդվ., մաս 1): Ակնհայտ է, որ երկրի հիմնական օրենքի նման հրամայականների պայմաններում դատաիրավական համակարգի զարգացման ու կատարելագործման աշխատանքները պետք է կենտրոնացվեն քաղաքացիների, կազմակերպությունների իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանությունն ապահովող նախկին ընթացակարգերի, ինստիտուտների և կառուցակարգերի կատարելագործման ու նորերի ստեղծման վրա:

«Քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի՝ կիրառման հարուստ փորձը ցույց տվեց, որ խախտված քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նախատեսված դատավարական կառուցակարգերը ծանրաշարժ են, ժամանակատար ու ծախսատար, երբեմն էլ՝ թերի, ինչը հարուցում էր քաղաքացիական շրջանառության մասնակիցների դժգոհությունը, բացասաբար էր անդրադառնում դատարանների ծանրաբեռնվածության և դատական իշխանության հեղինակության վրա, կասկածի տակ էր դնում արդարադատության արդյունավետությունն ու որակը:

Դատական պրակտիկայի ամփոփումը, ինչպես նաև քաղաքա-

¹ Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53), ՀՕ-247: Այսուհետ՝ նախկին ՔԴՕ:

ցիական գործեր քննող դատավորների շրջանում անցկացված հարցումները թույլ են տալիս եզրակացնել, որ ողջամիտ ժամկետներում քաղաքացիական գործերի քննությանը խոչընդոտող կարևորագույն պատճառներից էր դատավարական օրենսդրությամբ նախատեսված քաղաքացիական գործերի քննության պարզեցված դատավարական ընթացակարգերի անկատարությունը:

Հարկ է նկատել, որ աշխարհի շատ երկրներ, բախվելով քաղաքացիական գործերի ծավալների կայուն դինամիկ աճի և, որպես հետևանք, նաև դատարանների գերծանրաբեռնվածության խնդիրներին, մշակել և ներդրել են դատավարական տարաբնույթ կառուցակարգեր, որոնք թույլ են տալիս կրճատել գործերի քննության տևողությունը, խնայել դատական համակարգի ռեսուրսները և նվազեցնել դատարանների բեռնվածությունը²:

«Ավանդական» վարույթի հետ մեկտեղ պարզեցված և արագացված դատավարական ձևեր ներդնելու միտումը նկատվում է ոչ միայն ազգային մակարդակներում: Միջազգային կազմակերպությունները և անդրազգային կազմավորումները մշակել և ընդունել են մի շարք ակտեր, որոնք ևս հետապնդում են նշված նպատակը: Դրանցից պետք է նշել՝

1) Ամերիկյան իրավունքի ինստիտուտի (ԱԻԻ) կողմից 2004 թվականի մայիսին և Մասնավոր իրավունքի միասնականացման միջազգային ինստիտուտի (ՄԻՄՄԻ) կողմից 2004 թվականի ապրիլին ընդունված «Անդրազգային քաղաքացիական դատավարության սկզբունքներ»-ը³,

² Տե՛ս **Чуваева Е. В.**, Упрощение и ускорение процесса как способ обеспечения доступа к правосудию,

https://lomonosov-msu.ru/archive/Lomonosov_2015/data/7148/uid37283_report.pdf

³ Տե՛ս <http://www.unidroit.org/english/principles/civilprocedure/ali-unidroitprinciples-e.pdf>: Այսուհետ՝ «Սկզբունքներ» կամ «Անդրազգային սկզբունքներ»: Հարկ է նկատել, որ փաստաթղթի նախաբանում նշվում է. «Սկզբունքները հանդիսանում են առևտրային վեճերը դատական կարգով լուծելու **անդրազգային ստանդարտներ**, որոնք հավասարապես կիրառելի են քաղաքացիական վեճերի շատ այլ տեսակների լուծման համար և կարող են հիմք հանդիսանալ քաղաքացիական դատավարության

2) Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի կողմից 2007 թ. հուլիսի 11-ին ընդունված թիվ 861/2007 կանոնակարգը՝ «Փոքր չափի պահանջների քննության մասին»⁴,

3) Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի կողմից 2006 թ. դեկտեմբերի 12-ին ընդունված թիվ 1896/2006 կանոնակարգը՝ «Վճարման եվրոպական կարգադրության մասին»⁵,

4) Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի 14.05.1981 թ. թիվ R(81)7 հանձնարարականը՝ «Արդարադատության մատչելիությունն ապահովելու ուղիների մասին»⁶,

5) Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի 28.02.1984 թ. թիվ R(84)5 հանձնարարականը՝ «Քաղաքացիական դատավարության՝ դատական համակարգի կատարելագործմանն ուղղված սկզբունքների մասին»⁷:

Հաշվի առնելով շարադրվածը՝ ՀՀ նախագահի 30.06.2012 թ. թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով⁸ արդարադատության մատչելիության և ողջամիտ ժամկետներում գործի արդարացի դատական քննության իրավունքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը հռչակվեց որպես բարեփոխումների հիմնական նպատակներից մեկը, իսկ ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ցանկում նախատեսվեց նաև դատական քննության պարզեցված ընթացակարգերի կատարելագործումը (ծրագրի հավելված, կետ 5.8):

Ի կատարումն Ռազմավարական ծրագրի պահանջների՝ Ար-

դրորդ բարեփոխելու հետագա նախաձեռնությունների համար»:

⁴ Տե՛ս [http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32007R0861](http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32007R0861&from=EN)

⁵ Տե՛ս <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:32006R1896>

⁶ Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168050e7e4>

⁷ Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016804e19b1>

⁸ Տե՛ս ՀՀՊՏ 2012.07.11/33(907), Հոդվ. 827:

դարադատության նախարարության և Եվրոպայի Խորհրդի փորձագիտական խմբի կողմից մշակված և 2018 թ. փետրվարի 9-ին ԱԺ-ի կողմից ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում⁹ «Վարույթն առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ երկրորդ բաժնի շրջանակներում առանձնացվել է «Պարզեցված ընթացակարգեր» վերտառությամբ չորրորդ ենթաբաժին, որի շրջանակներում առանձին գլուխներով նախատեսվել և կարգավորվել են թվով չորս վարույթներ՝ հեռակա դատաքննություն (գլուխ 40), պարզեցված վարույթ (գլուխ 41¹⁰), արագացված դատաքննություն (գլուխ 42) և վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթ (գլուխ 43):

Հարկ է նկատել, որ, ի տարբերություն արագացված դատաքննության և կարգադրության վարույթի, հեռակա դատաքննությունն ու պարզեցված վարույթը նախկին ՔԴՕ-ի նորմերով նախատեսված չէին և որոշակի առումով նորույթ են ՀՀ դատավարական օրենսդրության համար:

⁹ Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374): Ուժի մեջ է մտել 09.04.2018 թ.-ին: Այսուհետ՝ ՔԴՕ:

¹⁰ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» 01.07.2019 թ. ՀՕ-102-Ն օրենքով գլուխը շարադրվել է նոր խմբագրությամբ: Տե՛ս ՀՀՊՏ 2019.07.17/46(1499):

I. ՀԵՌԱԿԱ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հեռակա դատաքննությունը կարգավորվել է «Հեռակա դատաքննություն» վերտառությամբ 40-րդ գլխի շրջանակներում, որն ընդգրկում է 292-295-րդ հոդվածները:

Հեռակա դատաքննության (հեռակա վճռի) ինստիտուտն առկա է մի շարք իրավական համակարգերում: Տարբեր անվանումներով (հեռակա վարույթ, դեֆոլտային վարույթ և այլն) և որոշակի առանձնահատկություններով այն հաջողությամբ կիրառվում է ԱՄՆ-ում, Անգլիայում և Ուելսում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Նիդերլանդներում, Ռուսաստանում, Ուկրաինայում և այլ երկրներում:

Դատարան չներկայանալը միշտ էլ դիտվել և ներկայումս էլ դիտվում է որպես դատական իշխանության կամքը չկատարելու միտում, հասարակական կարգի դեմ ոտնձգություն, մեղավոր վարքագիծ, որը չներկայացողի նկատմամբ պետք է առաջացնի տարբեր սանկցիաներ¹¹:

Անդրազգային սկզբունքների 17.3-րդ կետը դեֆոլտային¹² (հեռակա) վճիռ կայացնելը դիտարկում է որպես դատարան ներկայանալու պարտականության չկատարման համար դատարանի կողմից գործին մասնակցող անձանց նկատմամբ կիրառվող իրավաչափ պատժամիջոց: Ըստ Սկզբունքների 15.1-րդ կետի՝ հայցվորի դատարան չներկայանալու դեպքում դատարանը պետք է որոշում կայացնի գործով վարույթն ավարտելու մասին՝ առանց այն ըստ էության լուծելու, իսկ պատասխանողի դեմ, որն առանց հարգելի պատճառների չի ներկայանում դատարան, կարող է կայացվել դեֆոլտային (հեռակա) վճիռ (կետ 15.2), եթե հայցը ողջամտորեն հիմնավորված

¹¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.**, Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում, Եր., ԵՊՀ հրատ., 2001, էջ 458-459:

¹² «Default» բառն անգլերենում առավելապես գործածվում է որպես «մրցակցությունից դուրս գալը» կամ «վարկը մարելու կամ դատարան ներկայանալու պարտավորության խախտում», որը խարխլում է վարկային պարտավորության պատշաճ կատարումը կամ դատական նիստի բնականոն ընթացքը:

է ներկայացված փաստերով ու ապացույցներով և օրինական է բոլոր պահանջների մասով (կետ 15.3.3):

Եվրոպական երկրների դատավարական օրենսդրությունները ևս նախատեսում են որոշակի բացասական դատավարական հետևանքներ գործին մասնակցող այն անձանց համար, որոնք առանց հարգելի պատճառների չեն ներկայանում դատարանի կանչով: Հայցվորի չներկայանալը դատարան դիտարկվում է որպես «հրաժարում հետապնդումից» կամ ներկայացված պահանջից և հանգեցնում է «հայցի մերժման» (օրինակ՝ Գերմանիայում) կամ «հայցն առանց քննության» թողնելուն (օրինակ՝ Ռուսաստանում): Նման մոտեցում ցուցաբերվել է նաև գործող ՔԴՕ-ում, որի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը սահմանում է, որ դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե ծանուցված հայցվորը (դիմողը) կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել երկու հաջորդական դատական նիստերին և չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու կամ գործն իր բացակայությամբ լուծելու վերաբերյալ միջնորդություն, և պատասխանողը չի միջնորդել գործի քննությունը շարունակելու վերաբերյալ:

Հեռակա դատաքննությունը (հեռակա կամ դեֆոլտային վճիռ կայացնելու հնարավորությունը), ըստ էության, հայցն առանց քննության թողնելու համարժեքն է: Եթե պատասխանող կողմն անհիմն կերպով չի ներկայանում դատարան, չի արձագանքում հակառակ կողմի պահանջներին ու փաստարկներին կամ բավարարվում է պատասխանի ներկայացմամբ, դա վկայում է ներկայացված հայցապահանջը, դրա հիմքում ընկած փաստերը, հակառակ կողմի փաստարկներն ընդունելու, դրանք վիճարկելու հիմքեր չունենալու, դատական պաշտպանության իրավունքից օգտվելու ցանկության բացակայության, իսկ հազվադեպ՝ հայցի անհիմն և մերժման ենթակա լինելու հարցում նրա համոզվածության և իր պաշտպանության վրա ռեսուրսներ անտեղի ծախսելու ցանկության բացակայու-

յան մասին:

Հեռակա դատաքննությունն ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպես քաղաքացիական գործի քննության և լուծման պարզեցված կարգ, որը հայցվորի համաձայնությամբ կիրառվում է այն դեպքերում, երբ դատական նիստի ժամանակի ու վայրի մասին պատշաճորեն ծանուցված պատասխանողը չի ներկայացել դատարան և չի ներկայացրել գործի քննությունը հեղափոխելու, գործն իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու կամ դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու մասին միջնորդություն: Վարույթի պարզեցումը կատարվում է այն բանի հաշվին, որ դատարանը ստանում է նախնական դատական նիստում նախապատրաստական գործողություններն ավարտելու և հենց այդ նիստում գործի դատաքննությանն անցում կատարելու, գործում առկա ապացույցների հետազոտության արդյունքներով վեճն ըստ էության լուծելու հնարավորություն՝ չկաշկանդվելով պատասխանողի (նրա դիրքորոշման) բացակայությունից:

Հեռակա դատաքննություն կիրառելու հիմքերը: ՔԴՕ 292-րդ հոդվածը սահմանել է պարզեցված վարույթի թույլատրելիության մի քանի պայմաններ, որոնց առկայության դեպքում դատարանը կարող է կիրառել հեռակա դատաքննություն:

1) Պատասխանող կողմը ծանուցվել է նախնական դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Եթե գործի նյութերում բացակայում է պատասխանողի ծանուցված լինելը հավաստող ապացույցներ, դատարանն իրավունք չունի կիրառել հեռակա դատաքննություն և ընդհանուր կանոնի ուժով պարտավոր է գործի քննությունը հետաձգել: Ընդ որում, եթե գործով մասնակցում են մի քանի պատասխանողներ, նրանցից յուրաքանչյուրը պետք է ծանուցված լինի նախնական դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

2) Դատարանը կարող է արագացված դատաքննություն կի-

րառել այն դեպքերում, երբ ծանուցված պատասխանողը՝

ա. **չի ներկայացել նախնական դատական նիստին,**

բ. **չի ներկայացրել նիստը հետաձգելու, գործն իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու կամ դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու մասին միջնորդություն:**

Գործին մի քանի պատասխանողների մասնակցության դեպքում հեռակա դատաքննություն կարող է կիրառվել նախնական դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցված բոլոր պատասխանողների չներկայանալու և նրանց կողմից նշված միջնորդությունները չներկայացնելու դեպքում (292 հոդվ., մաս 2):

Հարկ է նկատի ունենալ, որ ծանուցված պատասխանողի չներկայանալը դատական նիստին ոչ բոլոր դեպքերում է առաջանում հեռակա դատաքննություն կիրառելու հնարավորություն: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցված գործին մասնակցող անձի չներկայանալը դատական նիստին արգելք չէ գործի քննության համար (147 հոդվ., մաս 3):

Հեռակա դատաքննություն կիրառելու համար ՔԴՕ-ը կարևորում է պատասխանողի անգործությունը և անտարբերությունն իր նկատմամբ հարուցված վարույթի նկատմամբ (չներկայանալը և միջնորդություն չներկայացնելը): Եթե պատասխանողը կամ պատասխանողներից որևէ մեկը, օգտվելով գործն իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու, դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու կամ գործի քննությունը հետաձգելու մասին միջնորդություն ներկայացնելու իրավունքից (147 հոդվ., մաս 1-2, 156 հոդվ.), դիմում է դատարանին նման խնդրանքով, դատարանը չի կարող տվյալ գործը քննել քննարկվող կարգով նույնիսկ այն դեպքերում, երբ մերժում է ներկայացված միջնորդությունը՝ բացակայության պատճառները ճանաչելով անհարգելի: Նման դեպքերում նախնական դատական

նիստը պետք է շարունակվի ընդհանուր կարգով, քանի որ մի կողմից՝ թվարկված միջնորդությունները ներկայացնելու պարագայում դատարանը չի կարող վստահ լինել, որ պատասխանողը խուսափում է դատական նիստին ներկայանալուց, մյուս կողմից՝ նման միջնորդություններից որևէ մեկը ներկայացնելու փաստն ինքնին վկայում է այն մասին, որ նա չի հրաժարվում ընդհանուր կարգով հայցի դեմ պաշտպանվելու, հայցի դեմ առարկություններ, դրանք հիմնավորող ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից (չէ՞ որ ներկայացված միջնորդությունը մերժելու մասին տեղեկանալուց հետո նա կարող է մասնակցել հաջորդ նիստերին): Թվարկված միջնորդություններից յուրաքանչյուրի ներկայացումը վկայում է պատասխանողի՝ ընդհանուր կարգով իր իրավունքների պաշտպանություն իրականացնելու ցանկության մասին, որի պարագայում հեռակա դատաքննություն կիրառելն անարդյունավետ կդարձնի տվյալ գործով դատաքննությունը: Չէ՞ որ հաջորդ դատական նիստին պատասխանողը կարող է ներկայացնել հայցի դեմ իր առարկությունները, այն հիմնավորող ապացույցները, ինչը, ի դեպ, ՔԴՕ 294-րդ հոդվածի 1-ին մասը դիտարկում է որպես հեռակա դատաքննությունը դադարեցնելու և ընդհանուր կարգով գործի քննությունն իրականացնելու հիմք:

Ուշագրավ է, որ ՔԴՕ նախագծում, որպես հեռակա դատաքննություն կիրառելու հիմք, սկզբնապես նախատեսվում էր ծանուցված պատասխանողի չներկայանալը երկու հաջորդական դատական նիստերին: Նման մոտեցումը ճիշտ էր թվում առնվազն երկու պատճառներով: Նախ՝ հաշվի առնելով կողմերի իրավահավասարության սկզբունքի պահանջները՝ ողջամիտ փաստարկ էր ներկայացվում առ այն, որ կողմերի չներկայանալը դատական նիստին նրանց համար անբարենպաստ հետևանքներ պետք է առաջացնի հավասարազոր պայմաններում. եթե հայցն առանց քննության թողնելու հիմք է հայցվորի երկու հաջորդական դատական նիստերին չներկայանալը, ապա պատասխանողին վերաբերող կարգավորում-

ները պետք է համարժեք լինեն: Բացի այդ՝ գործով առաջին կամ հաջորդող դատական նիստից որևէ մեկին կողմի չներկայանալը և բացակայության պատճառների մասին դատարանին չհայտնելը դեպքերի մեծամասնությամբ չի կարող դատարանի մոտ համոզմունք ձևավորել, որ կողմը խուսափում է դատարան ներկայանալուց և չունի չներկայանալու հարգելի պատճառ: Երկու հաջորդական նիստերին չներկայանալու պահանջ ամրագրելու դեպքում, մեր համոզմամբ, նվազագույնի կհասցվեին այն հնարավոր իրավիճակները, երբ կայացված վերջնական դատական ակտերը բեկանվում են այն պատճառաբանությամբ, որ կողմը զրկված է եղել իր դիրքորոշումն առաջին ատյանի դատարանում ներկայացնելու հնարավորությունից՝ իրենից անկախ պատճառներով: Նիստերից գեթ մեկին չներկայանալու և նշված միջնորդություններից մեկը չներկայացնելու հիմքով հեռակա դատաքննություն կիրառելը շատ նման է «պատասխանողի բացակայության փաստից օգտվելուն», ինչը, կարծում ենք, հեռակա դատաքննության ինստիտուտը կարող է դարձնել անարդյունավետ: Նիստերից մեկին պատասխանողի չներկայանալու դեպքում դատարանը պետք է կա՛մ ընդհանուր կարգով շարունակի գործի քննությունը նրա բացակայությամբ, կա՛մ հետաձգի դատական նիստը՝ այն հաշվով, որ հաջորդ դատական նիստին պատասխանողը կարող է ներկայանալ կամ գոնե ներկայացնել տեղեկություններ իր բացակայության պատճառների մասին: Հաջորդող նիստին պատասխանողի չներկայանալու դեպքում միայն հավանականության բավականին մեծ աստիճանով կարելի է ենթադրություն անել պատասխանողի՝ գործի քննությանը մասնակցելու ցանկության բացակայության մասին: Հակված ենք ենթադրելու, որ կայացված վերջնական դատական ակտերի կայունության հարցում մտահոգված դատավորները գործնականում հենց այսպես էլ կմոտենան հեռակա դատաքննություն կիրառելու իրենց հայեցողական լիազորության իրականացման հարցին:

3) Հայցվորը պետք է համաձայն լինի հեռակա դատա-

քննության: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հեռակա վարույթի կարգով կայացված վճիռը հնարավոր կայունության առումով շատ ավելի ռիսկային է: Քննարկվող պարզեցված վարույթը կիրառելու մասին որոշում կայացնելու պահին ո՛չ դատարանը և ո՛չ էլ հայցվորը չեն կարող վստահ լինել, որ նախնական դատական նիստին չներկայացած պատասխանողի բացակայության պատճառները հարգելի չեն, և նա զրկված չէ այդ պահին դատարան ներկայանալու հնարավորությունից: ՔԴՕ-ի՝ վերաքննիչ բողոքարկման իրավունքը կարգավորող նորմերի համաձայն՝ պատասխանողը վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելիս բողոքում բարձրացված հարցի կապակցությամբ կարող է ներկայացնել իր դիրքորոշումը և այն հաստատող ապացույցները, եթե առաջին ատյանի դատարանում զրկված է եղել դա անելու հնարավորությունից (368 հոդվ., մաս 3): Նման դեպքերում առաջին ատյանի դատարանի վճիռը ենթակա է բեկանման, եթե վերաքննիչ դատարանի գնահատմամբ ներկայացված ապացույցները էական նշանակություն ունեն գործի ճիշտ լուծման համար (378 հոդվ., մաս 2): Հետևաբար, առանց հայցվորի համաձայնության հեռակա դատաքննություն կիրառելը նրա համար կստեղծեր լրացուցիչ ռիսկեր, ընդ որում՝ իր կամքին հակառակ: Այս առումով գործի քննության կարգը (ընդհանուր կամ հեռակա) որոշելիս հայցվորի կամահայտնությունը հաշվի առնելու պահանջը լիովին համապատասխանում է տնօրինչականության սկզբունքին:

Հնարավոր է իրավիճակ, երբ հայցվորը չներկայանա դատական նիստին՝ ներկայացնելով գործի քննությունը հետաձգելու կամ գործն իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու, կամ դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու մասին միջնորդություն, իսկ պատասխանողն էլ, իր հերթին, չներկայանա դատարան, առանց ներկայացնելու իր բացակայության պատճառները: Քանի որ հեռակա դատաքննություն կիրառելու համար պահանջվում է հայցվորի հստակ ու միանշանակ կամահայտնություն, նման դեպքերում ևս հեռակա դա-

տաքննություն կիրառվել չի կարող, և դատարանը, ելնելով իրավիճակից, կա՛մ պետք է հետաձգի նախնական դատական նիստը, կա՛մ շարունակի այն կողմերի բացակայությամբ:

Հաշվի առնելով հեռակա վարույթի առանձնահատկությունները՝ ենթադրվում է, որ հեռակա դատաքննության կարգով գործի քննությունը կատարելու վերաբերյալ համաձայնություն հայցվորը պետք է տա այն դեպքերում, երբ վստահ է իր ներկայացրած պահանջի իրավաչափության, այն ճշգրտելու (փոփոխելու) անհրաժեշտության բացակայության, ներկայացված հայցի հիմքերի ճշտության, լրիվության, ներկայացված ապացույցների բավարարության մեջ, ինչպես նաև նրանում, որ պատասխանողը չունի ներկայացված հայցի դեմ լուրջ առարկություններ, դրանք հաստատող ապացույցներ կամ, թեև ունի, չի կարող ներկայացնել դատական նիստին չներկայանալու հարգելի պատճառներ:

Հարկ է նկատել, որ հայցվորի համաձայնությունն ինքնին բավարար չէ հեռակա դատաքննության կարգով գործի քննությունն իրականացնելու համար: Նույնիսկ մյուս պայմանների առկայության պարագայում դատարանն ինքն է որոշում վարույթը նման կարգով իրականացնելու նպատակահարմարությունը: Որպես վարույթը կառավարող, գործի արդյունավետ քննությունը կազմակերպող և իրականացնող սուբյեկտ՝ դատարանը բոլոր դեպքերում պետք է հաշվի առնի գործի հանգամանքները, ինչպես նաև հեռակա վարույթը դադարեցնելու և կրկին ընդհանուր կարգով գործի քննությունը վերսկսելու հավանականությունը: Թերևս դրանով էլ պայմանավորված է այն, որ ՔԴՕ 292-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է դատարանի՝ հեռակա դատաքննություն կիրառելու հայեցողական լիազորություն:

4) Հեռակա դատաքննություն կարող է կիրառվել բացառապես պատասխանողի առջև բացահայտված հայցի քննության համար:Պատասխանողի համար պետք է ապահովվի ներկայացված հայցի դեմ պաշտպանվելու ողջամիտ հնարավորություն: Դրա-

նով պայմանավորված՝ ընդհանուր կանոնների ուժով պատասխանողին վերապահվում է հայցադիմումը և կից փաստաթղթերը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում հայցադիմումի պատասխան ներկայացնելու (139 հոդվ., մաս 1), մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն օրենքի պահանջների խախտմամբ ներկայացված պատասխանը կրկին ներկայացնելու (139 հոդվ., մաս 7), նույն ժամկետում հակընդդեմ հայց հարուցելու (140 հոդվ., մաս 1), փոփոխված հայցադիմումի վերաբերյալ դատարանի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պատասխան ներկայացնելու (139 հոդվ., մաս 8), նախնական դատական նիստին մասնակցելու և մի շարք այլ հնարավորություններ: Տնօրինչականության սկզբունքի ուժով պատասխանողն ազատ է իր շահերի պաշտպանության մարտավարությունը որոշելու հարցում: Նա իր հայեցողությամբ է իրականացնում նշված իրավունքները, դատարանն էլ պարտավոր է ապահովել ողջամիտ պայմաններ դրանց իրացման համար: Եթե նախքան դատական նիստը պատասխանողը չի իրացնում նշված դատավարական իրավունքները, իսկ նիստին չներկայանալով՝ ըստ էության հրաժարվում է նաև դատավարության տվյալ փուլում հայցի դեմ պաշտպանվելու՝ օրենքով երաշխավորված և դատարանի կողմից ծանուցման փաստի ուժով ապահովված հնարավորությունից, ապա պատասխանողի նման վարքագիծը պետք է գնահատել որպես ընտրված մարտավարություն: Վերջինս կարող է պայմանավորված լինել նրանով, որ պատասխանողը վստահ է հայցի մերժման ենթակա լինելու հարցում կամ կարծում է, որ հայցի կապակցությամբ իր դիրքորոշումը լիարժեք ներկայացրել է հայցադիմումի պատասխանում: Հնարավոր է նաև, որ պատասխանողը, չունենալով հակընդդեմ պահանջներ, հայցի դեմ լուրջ առարկություններ և ապացույցներ, նախնական դատական նիստին չի ներկայանում, քանի որ չի ցանկանում անտեղի վատնել իր միջոցները և ժամանակը:

Բոլոր դեպքերում գործի քննությունը հեռակա դատաքննությամբ

յան կարգով կարող է իրականացվել բացառապես հայցադիմումի շրջանակներում ներկայացված հայցի առարկայի և հայցի հիմքերի շրջանակներում, որոնց վերաբերյալ պատասխանողը տեղեկացվել է հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը նրան ուղարկելու միջոցով¹³: Հենց այդ հայցից պաշտպանվելու իրավունքի պաշտպանության իրականացման համար դատարանը պետք է ապահովի ողջամիտ պայմաններ: Հետևաբար, եթե դատարանը բավարարում է հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին հայցվորի միջնորդությունը, ինչի մասին պատասխանողն անտեղյակ է, տվյալ դատական նիստում հեռակա դատաքննություն կիրառվել չի կարող (292 հոդվ., մաս 3): Հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոփոխելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը նախնական դատական նիստը պետք է հետաձգի՝ պատասխանողին տրամադրելով փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու ողջամիտ ժամկետ (139 հոդվ., մաս 8):

Բնականաբար, փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետն անցնելուց հետո նշանակված դատական նիստին չներկայանալու և հեռակա դատաքննություն կիրառելու մյուս պայմանների առկայության դեպքում դատարանը կարող է գործը քննել քննարկվող վարույթի կարգով:

5) **Հեռակա դատաքննություն կիրառվել չի կարող, եթե դատարանը վարույթ է ընդունել պատասխանողի ներկայացրած հակընդդեմ հայցը կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայցը** (292 հոդվ., մաս 4): Տվյալ սահմանափակումը պայմանավորված է հեռակա դատաքննության պարզեցված բնույթով: Հակընդդեմ հայցը և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող եր-

¹³ Ст'я Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации (постатейный). Под ред. Г. А. Жилина, М.: «Проспект», 2014, էջ 441:

րորդ անձի հայցը վարույթ ընդունվելու դեպքում գործը բարդանում է, դատարանը ստիպված է լինում մեկ վարույթի շրջանակներում քննել երկու (կամ երեք)՝ թեև փոխկապակցված, սակայն որոշակի առումով ինքնուրույն հայցեր, որոնց քննությունը հեռակա կարգով անհնար է: Չէ՞ որ նման դեպքերում հեռակա դատաքննություն կիրառելու համար դատարանը պետք է ստանա թե՛ սկզբնական հայցվորի, թե՛ հակընդդեմ պատասխանողի և թե՛ երրորդ անձի համաձայնությունը, մինչդեռ նրանցից որևէ մեկի չներկայանալու դեպքում նման համաձայնություն չի կարող ստացվել:

Հեռակա դատաքննության կարգը: Հեռակա դատաքննություն կիրառելու մասին դատարանը կայացնում է ***արձանագրային որոշում*** (293 հոդվ., մաս 1): ՔԴՕ-ը չի նախատեսում նախնական նիստից դուրս նման որոշում կայացնելու հնարավորություն: Հեռակա դատաքննություն կիրառելու մասին որոշումը կարող է կայացվել այն նախնական նիստում, որին պատասխանող կողմը չի ներկայացել և որին չներկայանալու պատճառների մասին չի տեղեկացրել դատարանին օրենքով նախատեսված միջնորդություններից որևէ մեկը ներկայացնելու միջոցով: Տվյալ նիստում հեռակա դատաքննություն կիրառելու մասին որոշում չկայացնելու դեպքում նման որոշում կայացնելու հնարավորությունը սպառվում է:

ՔԴՕ 293-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ նախքան հեռակա դատաքննության մասին որոշում կայացնելը դատարանը պետք է ըստ անհրաժեշտության կատարի 167-րդ հոդվածով նախատեսված նախապատրաստական գործողությունները, օրինակ՝ հայցվորի հետ քննարկի հայցի առարկան և հիմքը, վիճելի իրավահարաբերության բնույթը, կիրառելի իրավական նորմերը, պատասխանողի առարկությունների փաստական և իրավական հիմքերը, գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, ապացուցման պարտականությունը, ներկայացված ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը և այլն: Տվյալ պահանջի կատարումը թույլ կտա նախքան հեռակա դա-

տաքննության անցնելը վեր հանել նման կարգով գործը քննելու անհնարինությունը կամ աննպատակահարմարությունը: Չէ՞ որ, օրինակ, գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը և ապացուցման պարտականության հարցերը քննարկելու արդյունքում հայցվորի մոտ կարող է ի հայտ գալ նոր ապացույցներ կամ նոր միջնորդություններ ներկայացնելու կամ հայցը փոփոխելու անհրաժեշտություն, վիճելի իրավահարաբերության բնույթը և դատավարության մասնակիցների կազմը քննարկելիս դատարանը կարող է հետևության գալ, որ անհրաժեշտ է գործի քննությանը ներգրավել երրորդ անձ և այլն:

Հեռակա դատաքննություն կիրառելու մասին արձանագրային որոշումը կայացնելուց անմիջապես հետո դատարանը ձեռնամուխ է լինում պատասխանողի բացակայությամբ գործի դատաքննությանը: Նշվածը ենթադրում է, որ դատարանը չի կրում դատաքննություն սկսելու մասին պատասխանողին ծանուցելու պարտականություն: Անցումը նախնական նիստից դատաքննության կատարվում է նույն նիստում: Ընդ որում՝ գործի դատաքննությունը սկզբունքորեն կարող է ավարտվել նույն օրը:

ՔԴՕ-ը չի անդրադառնում այն հարցին, թե պարտավո՞ր է արդյոք դատարանը ծանուցել պատասխանողին դատական նիստի ժամանակի և վայրի մասին այն դեպքերում, երբ չի ավարտում գործի դատաքննությունը հեռակա դատաքննություն կիրառելու մասին որոշում կայացնելու օրը և հետաձգում է դատական նիստը: Կարծում ենք, որ այդ հարցին պետք է տալ դրական պատասխան, քանի որ դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցված չհամարվող գործին մասնակցող անձի բացակայությամբ գործը քննելը դատական ակտն անվերապահորեն բեկանելու հիմք է (365 հոդվ., մաս 2, կետ 2): Պետք է նկատի ունենալ, որ թեև նախնական նիստին չներկայանալը հեռակա դատաքննություն կիրառելու հիմք է, այն չի բացառում պատասխանողի՝ հաջորդ նիստերին ներկայանալու և հայցի դեմ պաշտպանվելու իրավունքը: Այդ մասին վկայում

է նաև ՔԴՕ 294-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը, որից ուղղակիորեն բխում է, որ պատասխանողը հեռակա դատաքննության կարգով գործի քննության ընթացքում կարող է ներկայացնել նոր ապացույցներ՝ դրանք թույլատրելու միջնորդությամբ, ինչպես նաև ապացույցներ ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ, որոնք բավարարելու դեպքում դատարանը պետք է դադարեցնի հեռակա դատաքննությունը և գործը քննի ընդհանուր կարգով:

Հեռակա դատաքննության կարգով գործի ըստ էության քննությունը կատարվում է ընդհանուր հայցային վարույթի կանոնների պահպանմամբ (293 հոդվ., մաս 1): Հեռակա դատաքննության ընթացքում դատարանի և գործին մասնակցող անձանց գործողությունները սկզբունքորեն չեն տարբերվում ընդհանուր կարգով դատաքննության ժամանակ կատարվող գործողություններից: Վարույթը հեռակա բնույթ ունի միայն դատական նիստին չներկայացած պատասխանողի համար¹⁴:

Հետևելով Անդրազգային սկզբունքների 15.3-րդ կետի պահանջներին՝ մայրցամաքային իրավական համակարգի զարգացած երկրների օրինակով ՔԴՕ-ով սահմանվել է. «Հեռակա դատաքննության կարգով գործի ըստ էության քննության ընթացքում դատարանն ընդհանուր հիմունքներով հետազոտում է գործին մասնակցող անձանց կողմից մինչև հեռակա դատաքննություն կիրառելու մասին որոշում կայացնելը պատասխանողի առջև բացահայտված ապացույցները՝ հաշվի առնելով նաև հայցադիմումի պատասխանում արտահայտված դիրքորոշումը» (293 հոդվ., մաս 2): Այլ կերպ ասած՝ դատարանը դատական նիստում գործին մասնակցող ներկայացած անձանց և նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ բանավորության, անմիջականության, մրցակցության և իրավահավասարության սկզբունքների պահպանմամբ պետք է հետազոտի գործ հարուցելու և այն դատական քննության նախապատ-

¹⁴ Ст'я Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации (постатейный). Под ред. Г. А. Жилина, М.: «Проспект», 2014, էջ 442:

րաստելու ժամանակ գործին մասնակցող անձանց, այդ թվում՝ պատասխանողի ներկայացրած ապացույցները, հաշվի առնի նրանց փաստարկները, առարկությունները և իրավական դիրքորոշումը:

Գործի քննությունն ավարտելը և հեռակա դատաքննության կիրառումը դադարեցնելը: Ապացույցները հետազոտելուց հետո նախագահողը, ավարտելով գործի դատաքննությունը, հայտարարում է վերջնական դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը: Քանի որ հեռակա դատաքննության կարգով գործի ըստ էության քննությունը կատարվում է ընդհանուր հայցային վարույթի կանոնների պահպանմամբ, ապացույցները հետազոտելուց հետո նախագահողը նախքան գործի քննությունն ավարտելու մասին հայտարարելը գործին մասնակցող անձանց պետք է հարցնի, թե նրանք արդյոք չեն ցանկանում ներկայացնել լրացուցիչ նյութեր՝ դրանք հետազոտելու միջնորդությամբ (163 հոդվ. մաս 1): Նախագահողը գործի դատաքննությունը պետք է ավարտի միայն նման միջնորդությունների բացակայության դեպքում:

Քանի որ հեռակա դատաքննություն կիրառելու դեպքում դատարանը չի կայացնում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում, ամբողջ ծավալով չի իրականացնում գործի նախապատրաստումը դատաքննության, ուստի քննարկվող վարույթում չեն գործում երրորդ անձանց վարույթ մտնելու (37 հոդվ., մաս 1, 38 հոդվ., մաս 1), ապացույցներ, դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու (63 հոդվ., մաս 3), հայցադիմումի պատասխան ներկայացնելու (139 հոդվ., մաս 7), հակընդդեմ պահանջներ ներկայացնելու (140 հոդվ., մաս 1), հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելու (168 հոդվ., մաս 1), հայցը փոփոխելու (170 հոդվ., մաս 1), նոր նյութաիրավական փաստեր վկայակոչելու (171 հոդվ., մաս 1), ոչ պատշաճ կողմին փոխարինելու (172 հոդվ., մաս 1), նոր պատասխանող ներգրավելու (173 հոդվ., մաս 1) ժամանակային սահմանափակումները, որոնք նախատեսված են ընդհանուր հայցային վարույթում: Հե-

տևում է, որ գործին մասնակցող անձինք նշված գործողությունները կարող են կատարել նաև հեռակա դատաքննության կարգով գործի քննության ընթացքում, մինչև գործի դատաքննությունն ավարտելու մասին հայտարարելը, բացառությամբ երրորդ անձանց վարույթ մտնելու, ինչը կարող է կատարվել մինչև դատարանի կողմից եզրափակիչ դատական ակտը հրապարակելը (37 հոդվ., մաս 1, 38 հոդվ., մաս 1)¹⁵:

Նշվածը հաշվի առնելով՝ ՔԴՕ-ը նախատեսում է հեռակա դատաքննությունը դադարեցնելու հիմքերը և դատավարական կարգը: Մասնավորապես սահմանվում է, որ դատարանը որոշում է կայացնում հեռակա դատաքննության կիրառումը դադարեցնելու և գործի քննությունն ընդհանուր կարգով իրականացնելու մասին, եթե՝

1) գործը հեռակա դատաքննության կարգով քննելու ընթացքում գործին մասնակցող անձը ներկայացրել է նոր ապացույց՝ այն թույլատրելու միջնորդությամբ կամ նոր ապացույց ձեռք բերելուն ուղղված միջնորդություն, և այդ միջնորդությունը դատարանը բավարարել է:

2) գործը հեռակա դատաքննության կարգով քննելու ընթացքում ի հայտ են եկել այլ հանգամանքներ, որոնք պարզելու համար անհրաժեշտ է գործի քննությունն անցկացնել ընդհանուր կարգով (294 հոդվ., մաս 1):

Դատաքննության կիրառումը դադարեցնելու և գործի քննությունն ընդհանուր կարգով իրականացնելու մասին որոշում կայացնելու դեպքում դատարանը վերսկսում է նախնական դատական նիստը: Նշված որոշումը՝ նախնական դատական նիստի ժամանակի և վայրի մասին նշումով, եռօրյա ժամկետում ուղարկվում է գոր-

¹⁵ Ուշագրավ է, որ ՔԴՕ-ում ամրագրված ընդհանուր կանոնի համաձայն՝ գործի դատաքննությունն ավարտվելուց հետո՝ մինչև վճռի հրապարակումը, գործին մասնակցող անձինք չեն կարող ներկայացնել միջնորդություններ: Այդ ժամանակահատվածում ներկայացված միջնորդությունները ենթակա չեն քննարկման (152 հոդվ., մաս 9): ՔԴՕ 37-րդ և 38-րդ հոդվածով նախատեսված դեպքերն այդ ընդհանուր կանոնից արված բացառություններ են:

ծին մասնակցող անձանց (294 հոդվ., մասեր 2-3):

Եզրափակիչ դատական ակտը: ՔԴՕ 295-րդ հոդվածի համաձայն՝ հեռակա դատաքննության կարգով կայացվող վերջնական դատական ակտի վրա տարածվում են օրենսգրքի ընդհանուր կանոնները: Չնայած որ հեռակա դատաքննությունը պարզեցված է, բայց քննարկվող վարույթի կարգով կայացվող եզրափակիչ դատական ակտը պետք է բավարարի լիարժեք դատաքննության հիման վրա կայացված եզրափակիչ դատական ակտին ներկայացվող բոլոր պահանջները (լինի օրինական, հիմնավորված, պատճառաբանված և այլն): Ընդհանուր կանոնները տարածվում են նաև հեռակա դատաքննության կարգով եզրափակիչ դատական ակտը կայացնելու, հրապարակելու, գործին մասնակցող անձանց հանձնելու (ուղարկելու) և օրինական ուժի մեջ մտնելու վրա:

Պետք է նկատի ունենալ, որ հեռակա դատաքննության կարգով վճռի կայացումն ամենևին էլ չի նսեմացնում այս վճռի՝ որպես արդարադատության ակտի նշանակությունը: Այն օժտվում է օրինական ուժի մեջ մտած վճռի բոլոր հատկանիշներով՝ անհերքելիությամբ, բացառիկությամբ, պարտադիրությամբ, նախադատելիությամբ և կատարելիությամբ¹⁶:

Հեռակա դատաքննության կարգով կայացված վերջնական ակտի բողոքարկումը: Անդրազգային սկզբունքների 15.4-րդ կետի համաձայն՝ հեռակա (դեֆոլտային) վճիռը պետք է ենթակա լինի բողոքարկման կամ անվավեր ճանաչման: Սկզբունքներին կից մեկնաբանություններում նշվում է, որ «դատավարության մասին ազգային օրենքը պետք է նախատեսի կանոններ, որոնք թույլ կտան կողմերին բողոքարկել վճիռը վերադաս ատյաններում կամ վիճարկել վճիռն այն կայացրած դատարանում, եթե այդ վճիռը կայացվել է՝ առանց պահպանելու դեֆոլտը կարգավորող կանոնները» (կետ P-15F): Ընդ որում՝ սահմանվում է սկզբունք, ըստ որի՝ «այն կողմը, որի դեմ դեֆոլտի վճիռ է կայացվել, պետք է իրավունք ունենա ներ-

¹⁶ Տե՛ս Պետրոսյան Ռ. Գ., նշված աշխ., էջ 470:

կայացնել ապացույց, որ ծանուցումը բացակայում էր, կամ ներկայացնել որևէ այլ պատշաճ պատճառաբանություն» (P-15G):

Հեռակա դատաքննության վարույթը էլ ավելի պարզեցնելու և հնարավոր դատական սխալներն ու չարաշահումները բացառելու նկատառումներից ելնելով՝ ՔԴՕ-ը մշակելիս որոշում է կայացվել հրաժարվել եվրոպական որոշ երկրների և ՌԴ-ի օրենսդրություններով նախատեսված՝ վճիռն այն կայացնող դատարանի կողմից պատասխանողի միջնորդությամբ վերացնելու հնարավորությունից: Փոխարենը ՔԴՕ-ը նախատեսել է պատասխանողի շահերի պաշտպանության երկու գործիք.

Նախ՝ ի լրումն դատական ակտերի բեկանման այլ հիմքերի՝ նախատեսվել է, որ ծանուցված չհամարվող պատասխանողի բացակայության պայմաններում քննված գործով կայացված վճիռը ենթակա է բեկանման (365 հոդվ., մաս 2, կետ 2),

երկրորդ՝ եթե բողոք բերողի դիրքորոշումը հաստատող և վերաքննիչ դատարան ներկայացված ապացույցն առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ չի ներկայացվել՝ գործին մասնակցող անձի կամքից անկախ հանգամանքներով (այն է՝ հարգելի պատճառներով), ապա վերաքննիչ դատարանը բեկանում է դատական ակտը և գործն ուղարկում է համապատասխան դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ներկայացված ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար (378 հոդվ., մաս 2):

Կարծում ենք, որ նման կարգավորումը պարունակում է և՛ դատական նիստի մասին չծանուցված, և՛ ծանուցված, սակայն դատական նիստին հարգելի պատճառներով չներկայացած ու այդ պատճառների մասին դատարանին հայտնելու հնարավորությունից օբյեկտիվորեն զրկված պատասխանողի իրավունքների ապահովման գործուն երաշխիքներ:

II. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹ

ՔԴՕ-ով նախատեսված՝ քաղաքացիական գործերի քննության և լուծման հաջորդ պարզեցված ընթացակարգը պարզեցված վարույթն է: Այն նորույթ է քաղաքացիական դատավարության օրենսդրության համար, թեև որոշակի առանձնահատկություններով լայնորեն կիրառվում է արդարադատության մի շարք եվրոպական համակարգերում (Գերմանիա, Նիդերլանդներ, Անգլիա և Ուելս և այլն): Վարույթի տվյալ տեսակը ներդրվել ու հաջողությամբ կիրառվում է ՌԴ արբիտրաժային դատավարությունում, իսկ 2016 թվականին ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի բարեփոխումների արդյունքում այն նախատեսվեց նաև քաղաքացիական դատավարության ոլորտում¹⁷:

Վարույթի քննարկվող տեսակը կարգավորվել է «Պարզեցված վարույթը» վերտառությամբ 41-րդ գլխի շրջանակներում, որն ընդգրկում է 296-302-րդ հոդվածները:

Պարզեցված վարույթը հիմնականում նախատեսված է ակնհայտորեն պարզ և/կամ համեմատաբար փոքր հայցագին ունեցող հայցերով քաղաքացիական գործերի քննության և լուծման համար: Այն մշակելիս ուղենիշային նշանակություն է ունեցել Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի կողմից 2007 թ. հուլիսի 11-ին ընդունված «Փոքր չափի պահանջների քննության մասին» թիվ 861/2007 կանոնակարգը¹⁸: Վերջինս նախատեսում է փոքր հայցագին ունեցող հայցերով քաղաքացիական գործերի քննության այնպիսի պարզեցված ընթացակարգ, որը շրջանցելով «ավանդական»

¹⁷ Ст'у Федеральный закон №45-ФЗ от 02.03.2016 г. «О внесении изменений в Гражданский процессуальный кодекс Российской Федерации и Арбитражный процессуальный кодекс Российской Федерации»: Ուժի մեջ է մտել 01.09.2016 թ.:

¹⁸ Ст'у Regulation (EC) No 861/2007 of the European Parliament and of the Council of 11 July 2007 establishing a European Small Claims Procedure - <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32007R0861&from=EN>, այստեղտե՛ս՝ Եվրոպական կանոնակարգ:

Ֆորմալ դատավարության մի շարք պահանջներ՝ կապված գործը դատաքննության նախապատրաստելու, փաստական և ապացուցողական նյութը դատարան ներկայացնելու, ապացույցները դատական նիստում հետազոտելու, կայացված վճիռը պատճառաբանելու հետ, թույլ է տալիս էապես բարձրացնել արդարադատության մատչելիության և արդյունավետության աստիճանը, նվազեցնել դատական պաշտպանության ծախսատարությունը և ժամանակատարությունը և առաջին ատյանի դատարանների ծանրաբեռնվածությունը:

Պարզեցված վարույթի կարգով գործի քննությունը սովորական ընթացակարգով կատարվող քննությունից փարբերող հիմնական առանձնահատկությունը նրանում է, որ այսպեղ օրենքով կանխորոշված առանձին կատեգորիայի գործերով դատարանին հնարավորություն է ընձեռվում գործը քննելու առանց բանավոր լուսմների՝ կողմերի ներկայացրած փաստաթղթերի և ապացույցների հիման վրա: Ընդ որում՝ պարզեցված վարույթը ենթադրում է գործի ըստ էության քննություն և լուծում՝ օրենքով սահմանված կրճատ ժամկետում և կողմերի մրցակցության ու իրավահավասարության մի շարք երաշխիքների պահպանմամբ:

Վարույթի քննարկվող տեսակը մշակելիս հիմք են ընդունվել հետևյալ հայեցակարգային մոտեցումները.

ա) պարզեցված վարույթի կարգով կարող են քննվել փոքր հայցագին ունեցող գործերը, այն գործերը, որոնցով պատասխանող կողմը գրավում է խիստ պասիվ դիրք՝ ըստ էության չվիճարկելով ներկայացված հայցը, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ՝ այլ գործեր՝ պայմանով, որ նման ընթացակարգով գործի քննությունը չի հանգեցնում գործին մասնակցող անձի արդար դատաքննության իրավունքի որևէ բաղադրատարրի ոտնահարման,

բ) հայցագինը «փոքր» որակելու համար որպես ուղենիշ պետք է ծառայի դատավորների վարույթում գտնվող գործերի կազմի, առանձնահատկությունների, այդ գործերով կողմերի ակտիվության աստիճանի վերլուծությունը: «Փոքր» որակվող հայցի արժեքը սահ-

մանելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն այն, որ ինչքան նախանշված արժեքը բարձր է, այնքան ավելի շատ սուբյեկտ կարող է օգտվել ճկուն, քիչ ծախսատար և արագ ընթացակարգից, այլև հաշվի առնել երկրի սոցիալ-տնտեսական վիճակը և դատական իշխանության նկատմամբ վստահության աստիճանը,

գ) քննարկվող ընթացակարգի մասին նորմերը պետք է սահմանեն վարույթի թույլատրելիության պայմաններ՝ ներառյալ այնպիսի իրավիճակները, որոնք բացառում են դրա կիրառումը՝ բացասաբար անդրադառնալով դատական պաշտպանության արդյունավետության վրա,

դ) վարույթը պետք է լինի ճկուն, հնարավորություն տա չկաշկանդվելու «ավանդական» փուլային վարույթին հատուկ մի շարք ֆորմալ պահանջներով,

ե) գործի քննությունը պետք է իրականացվի առանց բանավոր լուսմներ կազմակերպելու՝ գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ ծագում է գործին մասնակցող անձանց հետ ներկայացված ապացույցների հետ կապված որոշակի հարցեր քննարկելու կամ կողմերի տնօրինչական գործողությունները ձևակերպելու անհրաժեշտություն,

զ) ընթացակարգը պետք է հնարավորություն նախատեսի կիրառելու այնպիսի ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն կընձեռեն խնայելու դատարանի և գործին մասնակցող անձանց ժամանակը, և որոնց կիրառումը հնարավոր է ապահովել՝ հաշվի առնելով դատարանների տեխնիկական հագեցվածությունը,

է) գործի լուծման համար անհրաժեշտ փաստական և ապացուցողական նյութի լրիվությունը, ինչպես նաև դրա ներկայացման օպերատիվությունն ապահովելու համար պետք է սահմանվեն կողմերի չհայտարարված պահանջները, առարկությունները, տարատեսակ միջնորդությունները, դրանք հիմնավորող պահանջները դատարանի կողմից սահմանված ժամկետներում ներկայացնելու պահանջը, ինչպես նաև սահմանված ժամկետների խախտմամբ

ներկայացված դատավարական նյութը չընդունելու դատարանի լիազորությունը,

ը) պարզեցված վարույթի կարգով կայացվող եզրափակիչ դատական ակտերի հրապարակման ընթացակարգը պետք է հնարավորինս պարզեցվի՝ բացառելով կայացված վերջնական դատական ակտը դատական նիստում հրապարակելու անհրաժեշտությունը և միևնույն ժամանակ ապահովելով դրա հասանելիությունը հանրությանը (հրապարակայնությունը),

թ) նպատակահարմար է հնարավորինս կրճատել պարզեցված վարույթի կարգով կայացված վերջնական դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելու և վերաքննության կարգով բողոքարկելու ժամկետները:

Գործերի շրջանակը, որոնք կարող են քննվել պարզեցված վարույթի կարգով. ՔԴՕ 297-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի **երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջներն** առաջին ատյանի դատարանը քննում է պարզեցված վարույթի կարգով»¹⁹: Նույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերը թույլ են տալիս օրենքով նախանշված որոշակի պայմանների առկայության դեպքում պարզեցված վարույթի կարգով քննել նաև **այլ գործեր:**

Միևնույն ժամանակ ՔԴՕ 297-րդ հոդվածի 4-րդ մասում օրենսդիրը սահմանել է մի շարք հանգամանքներ, որոնք բացառում են գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հնարավորությունը:

Ըստ էության ՔԴՕ-ը սահմանել է պարզեցված վարույթի թույլատրելիության մի քանի պայմաններ, որոնց առկայությունը պետք

¹⁹ Ընդ որում՝ օրենքը սահմանում է, որ արտարժույթով պահանջ ներկայացվելու դեպքում նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցելու հարցը որոշվում է հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

է ակնհայտ լինի գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշումը կայացնելու համար:

1) **Գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջով գործը կարող է քննվել պարզեցված վարույթի կարգով, եթե հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ դրա հայցագինը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը** (2 մլն դրամ): Նշված գումարային մեծությունը, իհարկե, որոշակի առումով պայմանական է: Ուշագրավ է, որ փոքր չափի դրամական հատուցման հայցերի թվին են դասվում Նիդեռլանդներում՝ 25000 եվրոն, Անգլիայում և Ուելսում՝ 10000 ֆունտը, Գերմանիայում՝ 5000 եվրոն չգերազանցող գումարի վերաբերյալ պահանջները: Ռուսաստանի Դաշնության արբիտրաժային դատավարության օրենսգրքով պարզեցված վարույթ կիրառելու գումարային շեմն իրավաբանական անձանց դեմ ներկայացվող հայցերով սահմանված է 500000, իսկ ընդդեմ անհատ ձեռնարկատերերի ներկայացվող հայցերով՝ 250000 ռուբլի (մոտ 7000 և 3500 եվրո համապատասխանաբար): Միևնույն ժամանակ վերը հիշատակված Եվրոպական կանոնակարգում որպես «պահանջի փոքր չափ», որը թույլատրելի է դարձնում պարզեցված վարույթի կիրառումը, սահմանված է 2000 եվրոն չգերազանցող գումարը (հոդվ. 2, մաս 1):

Հաշվի առնելով ՀՀ-ում տիրող սոցիալական-տնտեսական վիճակը և դատական համակարգի նկատմամբ վստահության մակարդակը՝ պարզեցված վարույթ կիրառելու թույլատրելիության առավելագույն գումարային շեմ է սահմանվել Եվրոպական կանոնակարգով նախատեսված նվազագույն չափը, որը, մի կողմից, թույլ կտա քննարկվող ընթացակարգը հասանելի դարձնել մեծ թվով գործերով՝ խնայելով դատավարական ռեսուրսները, իսկ մյուս կողմից՝ հաշվի առնել բնակչության հարաբերական հարստությունը և դատական համակարգի նկատմամբ վստահության աստիճանը²⁰:

²⁰ St'u Reform of the Armenian Code of Civil Procedure, Report by prof. dr. C. H. van Rhee, Maastricht University, November 2015, էջ 5:

2) ՔԴՕ 297-րդ հոդվածի 2-րդ մասը կարգավորում է այն իրավիճակները, երբ հայցադիմումում միացված են մի քանի փոխկապակցված պահանջներ, որոնց մի մասը ենթակա է քննության պարզեցված վարույթի կարգով, իսկ մյուսը՝ ոչ: Մասնավորապես սահմանվում է. **«Մեկ հայցադիմումում միացված մի քանի փոխկապակցված պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկը ենթակա է քննության պարզեցված վարույթի կարգով, իսկ մյուսը՝ ընդհանուր հայցային վարույթի կարգով, դատարանը քննում է պարզեցված վարույթի կարգով, եթե փոխկապակցված պահանջներն ածանցվում են պարզեցված վարույթի կարգով քննության ենթակա պահանջից»:** Այլ կերպ ասած՝ գործը ենթակա է քննության պարզեցված վարույթի կարգով, եթե փոխկապակցված պահանջներից հիմնականը 2 մլն դրամը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջն է, իսկ մյուսներն ունեն այդ պահանջից ածանցված բնույթ: Այսպես, եթե մեկ հայցադիմումով ներկայացվել են 2 մլն դրամը չգերազանցող գումար բռնագանձելու և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու վերաբերյալ հայցապահանջներ, վերջինիս՝ գումարի բռնագանձման պահանջից ածանցված լինելու փաստի ուժով գործը ենթակա է քննության պարզեցված վարույթի կարգով:

Բանականաբար եթե փոխկապակցված պահանջներից հիմնականը ենթակա է քննության ընդհանուր հայցային վարույթի կարգով, իսկ 2 մլն դրամը չգերազանցող գումար բռնագանձելու վերաբերյալ պահանջն ունի ածանցյալ բնույթ, գործը պետք է քննվի ընդհանուր հայցային վարույթի կարգով: Այսպես՝ ընդհանուր հայցային վարույթի կարգով պետք է քննվի գրպարտություն համարվող տարածված տեղեկությունները հերքելու և 1 մլն դրամ փոխհատուցում վճարելու պահանջներով գործը: Նշված օրինակում հիմնականը գրպարտություն համարվող տարածված տեղեկությունները հերքելու պահանջն է, քանի որ դրա բավարարումը կամ մերժումը մեծապես կանխորոշում է փոխհատուցում վճարելու պահանջի լուծու

մը²¹:

3) Գումարի բռնագանձման հետ չկապված կամ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող պահանջի կապակցությամբ հարուցված գործը կարող է քննվել պարզեցված վարույթի կարգով օրենքով նախանշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում:

Նման գործերով պարզեցված վարույթի կիրառումը թույլատրելի է, նախևառաջ, գործին մասնակցող անձանց գրավոր համաձայնությամբ: Կարևոր է նկատի ունենալ, որ գործին մասնակցող անձանց համաձայնությունը չի պահանջվում նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջ ներկայացված լինելու պարագայում, ինչպես նաև այն դեպքերում, երբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջի հետ մեկտեղ ներկայացվում են դրանից ածանցվող այլ պահանջներ. նման դեպքերում հայցադիմումը վարույթ ընդունելիս դատարանն ի սկզբանե որոշում է կայացնում գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին՝ հաշվի չառնելով կողմերի կամքը և հիմք ընդունելով ներկայացված պահանջի չափն ու պարզեցված վարույթը բացառող հանգամանքների բացակայության փաստը:

Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու վերաբերյալ գործին մասնակցող անձանց գրավոր համաձայնությունը կարող է դատարան ներկայացվել հայցադիմումին, հակընդդեմ հայցին, հայցադիմումի պատասխանին կից կամ նախնական դատական նիստի ընթացքում: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ նման համաձայնության առկայությունն ինքնին պարզեցված վարույթ կիրառելու հիմք չէ (նաև այն դեպքերում, երբ հայցադիմումին կից ներկա-

²¹ Հարկ է սակայն նկատել, որ նշվածը չի բացառում մեկ հայցադիմումում միացված պահանջները ՔԴՕ 123-րդ հոդվածով սահմանված կարգով առանձին վարույթներում առանձնացնելու, դրանցից մեկը՝ ընդհանուր կարգով, մյուսը՝ պարզեցված կարգով քննելու դատարանի հնարավորությունը:

յացվում է գործին մասնակցող բոլոր անձանց կողմից նախապես տրված գրավոր համաձայնություն): Նախ, ի տարբերություն նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող պահանջների, որոնք ՔԴՕ 297-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի ուժով պետք է քննվեն քննարկվող վարույթի կարգով, «այլ պահանջներ»-ը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցում օրենսդիրը դատարանին վերապահել է հայեցողական լիազորություն: Հետևաբար, նույնիսկ կողմերի համաձայնության առկայության պայմաններում գործը քննող դատարանը պետք է որոշի գործով պարզեցված վարույթ կիրառելու նպատակահարմարությունը՝ ելնելով գործի առանձնահատկություններից և արդարադատության շահերից²²: Բացի այդ՝ «այլ գործեր»-ով պարզեցված վարույթ կիրառվել չի կարող, եթե գործը պարզեցված վարույթի կարգով քննելու վերաբերյալ նախապես գրավոր համաձայնություն տված կողմը հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետում (ըստ էության մինչև ապացուցման բեռը բաշխելու մասին որոշում կայացնելը) ներկայացրել է առարկություն՝ գործը պարզեցված վարույթի կարգով քննելու դեմ:

«Այլ գործերով» պարզեցված վարույթի կիրառումը թույլատրելի է նաև այն դեպքերում, երբ *մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանի կողմից որոշում կայացնելը գործին մասնակցող որևէ անձ չի առարկել հայցի դեմ կամ չի ներկայացվել հակընդդեմ հայց*: Ներկայացված հայցի դեմ առարկությունների բացակայությունը բավարար հիմք է՝ նախնական դատական նիստում գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշում կայացնելու համար: Նման դեպքերում գործին մաս-

²² Այս հարցում վճռորոշ նշանակություն ունի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում ձևակերպված՝ դատավորի վարքագծի կանոնը, համաձայն որի՝ ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը քննել և լուծել ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ՝ առանց վնասելու արդարադատության շահերին (ընդգծումը մերն է):

նակցող անձանց համաձայնություն չի պահանջվում:

Պարզեցված վարույթի կիրառման ինքնուրույն հիմք է հանդիսանում նաև այն իրավիճակը, երբ ի սկզբանե ընդհանուր կարգով վարույթ ընդունված *հայցի առարկայի փոփոխության արդյունքում հայցապահանջի չափը (հայցագինը) չի գերազանցում նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը*: Նման դեպքերում ևս գործին մասնակցող անձանց համաձայնություն չի պահանջվում:

4) ՔԴՕ 297-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործը քննում է պարզեցված վարույթի կարգով նաև ***օրենքով նախատեսված այլ դեպքերում***: Նման նորմ նախատեսելով՝ օրենսդիրը, ըստ էության, չի բացառել նաև օրենքի ուղղակի ցուցումով տարաբնույթ կատեգորիայի գործերի քննությունը պարզեցված կարգով իրականացնելու հնարավորությունը: Ընդ որում՝ ուշագրավ է այն, որ օրենքով նախատեսված դեպքերում պարզեցված վարույթի կիրառելիությունը սահմանող նորմերն ունեն իմպերատիվ բնույթ, չեն ենթադրում կողմերի համաձայնություն կամ դատարանի հայեցողություն: Դիցուք որպես այդպիսի օրինակ կարող են ծառայել ՔԴՕ 220 հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ իրավաբանական անձի մասնակիցների (անդամների) ընդհանուր ժողով գումարելու հետ կապված վեճերը, 221-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ իրավաբանական անձի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին իրավաբանական անձի մասնակիցների (անդամների) պահանջները, որոնք ենթակա են քննության պարզեցված վարույթի կարգով՝ անկախ կողմերի կամքից և դատարանի հայեցողությունից:

Վերը նշված բոլոր դեպքերում ***գործը կարող է քննվել պարզեցված վարույթի կարգով, եթե բացակայում են վարույթի փվյալ տեսակը բացառող հանգամանքները***: Նշված հանգամանքները միևնույն ժամանակ դիտարկվում են որպես պարզեցված վարույթը դադարեցնելու և ընդհանուր հայցային վարույթի կարգով գործի քննությանն անցնելու հիմքեր:

Ըստ ՔԴՕ 297-րդ հոդվածի 4-րդ մասի՝ գործը չի կարող քննվել պարզեցված վարույթի կարգով հետևյալ դեպքերում:

ա) *Առկա է գործին մասնակցող անձանց, վկաներին, փորձագետներին կամ մասնագետներին հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու, ապացույցը գտնվելու վայրում հետազոտելու կամ դատական հանձնարարություններ տալու անհրաժեշտություն:* Նման սահմանափակում նախատեսելիս հաշվի է առնվել ոչ միայն պարզեցված վարույթների իրավական կարգավորման օտարերկրյա փորձը, այլ նաև Անդրազգային սկզբունքների 16.4 հոդվածում ձևակերպված այն ելակետային դրույթը, ըստ որի՝ «կողմերից, վկաներից և փորձագետներից ցուցմունք ձեռք բերելը պետք է տեղի ունենա դատարանի սովորական ընթացակարգերի համաձայն, կողմը պետք է իրավունք ունենա իրականացնել լրացուցիչ հարցաքննություն անմիջականորեն մեկ այլ կողմի, վկայի կամ փորձագետի հետ, որը սկզբում հարցաքննվել է դատարանի կամ վարույթի այլ մասնակցի կողմից»:

Ըստ էության քննարկվող սահմանափակումը նախատեսելը պայմանավորված է բանավոր ապացույցներ հետազոտելիս և նշված դատավարական գործողությունները կատարելիս կողմերի մրցակցային իրավունքների իրացումն ապահովելու անհրաժեշտությամբ:

բ) *Դատարանը վարույթ է ընդունել հակընդդեմ հայց կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայց:* Նման սահմանափակում նախատեսելիս հաշվի է առնվել այն, որ պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու պահի դրությամբ չի սպառվում հակընդդեմ հայց ներկայացնելու կամ երրորդ անձի կողմից վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջով հայց ներկայացնելու՝ օրենքով երաշխավորված հնարավորությունը: Հարկ է նկատի ունենալ, որ պարզեցված վարույթը «սովորական» վարույթի համեմատ ունի պարզեցված բնույթ, մինչդեռ հակընդդեմ հայցը և վեճի առարկայի

նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայցը վարույթ ընդունվելու դեպքում գործը բարդանում է, ինչը բացառում է սահմանված պարզ ընթացակարգի շրջանակներում այն արդյունավետ քննելու և լուծելու հնարավորությունը:

գ) *Դատարանը պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո թույլատրել է հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը:* Պարզեցված վարույթի կիրառումը բացառող քննարկվող հանգամանքը սահմանելիս օրենսդիրն ակնհայտորեն նկատի է ունեցել հայցի որակական փոփոխությունը կամ հայցի քանակական կողմի այնպիսի փոփոխությունը, որի արդյունքում պահանջի չափը գերազանցում է 2 մլն դրամը: Համապատասխանաբար, քննարկվող վարույթը բացառող հանգամանք չպետք է դիտարկել հայցապահանջների չափի նվազեցումը, որի արդյունքում նման փոփոխությունը թույլատրելու պահի դրությամբ ի հայտ չեն գալիս պատասխանողի առջև չբացահայտված նոր պահանջներ և, համապատասխանաբար, նրա դատավարական շահերի խախտման վտանգներ:

դ) *Առկա է ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու կամ գործի քննությանն այլ անձանց ներգրավելու անհրաժեշտություն:* Տվյալ սահմանափակումը հիմնականում պայմանավորված է՝

- ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու հարցում հայցվորի տնօրինչական իրավունքի իրացումն ապահովելու,

- վարույթի ընթացքում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Ակնհայտ է, որ պարզեցված վարույթի կիրառման պարագայում նշվածը գործնականում չի կարող ապահովվել առանց մրցակցության և իրավահավասարության սկզբունքների ոտնահարման: Դատարանը չի կարող հետևություն անել վարույթը բացառող մյուս հանգամանքների առարկության կամ բացակայության վերաբերյալ, քանի դեռ չի կայացրել այլ անձանց վարույթ ներգրավելու մասին

համապատասխան որոշում և սահմանված կարգով հնարավորություն չի տվել նրանց ներկայացնելու իրենց դիրքորոշումը, որը, օրինակ, անխուսափելիորեն կարող է առաջացնել փորձաքննություն նշանակելու, վկաներ հարցաքննելու կամ գործին մասնակցող անձանց ցուցմունքները լսելու անհրաժեշտություն:

ե) *Ներկայացվել է խմբային հայց*, որը կարող է քննվել բացառապես ՔԴՕ 26-րդ գլխով սահմանված հատուկ-հայցային վարույթի կարգով:

զ) *Անհրաժեշտ է որոշել գործին մասնակցող անձանց կողմից չվկայակոչված, սակայն գործի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստեր*: Պարզեցված վարույթը բացառող տվյալ կանոնը նախատեսելիս հաշվի են առնվել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը որոշելու հետ կապված դատավարական կանոնները: Թեև «հաստատման ծանրությունը» ՔԴՕ-ը դրել է գործին մասնակցող անձանց վրա, այնուամենայնիվ չի հրաժարվել այն մոտեցումից, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը որոշելու, դրանց նկատմամբ նյութական օրենսդրությունը ճիշտ կիրառելու բեռը կրում է դատարանը: ՔԴՕ 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով: Պարզեցված վարույթի կառուցակարգը ենթադրում է, որ դրա կիրառումը հնարավոր է բացառապես այն դեպքերում, երբ հայցվորը, ներկայացնելով որոշակի նյութաիրավական պահանջ, դրա հիմքում դրել (վկայակոչել) է կիրառման ենթակա իրավական նորմերով անհրաժեշտ բոլոր փաստերը, իսկ պատասխանողը սահմանված ժամկետում պատասխան չի ներկայացրել կամ ներկայացրել է այնպիսի պատասխան, որը չի կարող ազդել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակի վրա:

Այլ կերպ ասած՝ գործի քննությունը չի կարող իրականացվել պարզեցված վարույթի կարգով, եթե դատարանի համոզմամբ հայցի և/կամ դրա դեմ ներկայացված առարկության հիմքում դրված փաստական հանգամանքների շրջանակը լիարժեք չէ, ապացուցման առարկան հարկ է լրացնել նյութական օրենսդրությամբ կարևորվող այլ հանգամանքներով, որի պարագայում գործը պետք է նախապատրաստվի դատաքննության ընդհանուր կանոններով, ներառյալ կողմերի հետ քննարկվի գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը, այդ հանգամանքների ապացուցման պարտականությունը բաշխելու և ապացույցներ ներկայացնելու համար անհրաժեշտ ժամկետները, ինչպես նաև կայացվի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում:

Նման կարգավորումը նպատակ է հետապնդում նաև ապահովելու գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցում ուղղակիորեն շահագրգռված հայցվորների կողմից «որակյալ» հայցադիմումների ներկայացումը: Պարզեցված վարույթի կարգով հայցի արագ քննության և բավարարման ձգտող հայցվորն ի սկզբանե պետք է հոգ տանի վիճելի իրավահարաբերությունը ճիշտ որակելու, կիրառման ենթակա նորմերի շրջանակը որոշելու, այդ նորմերով արժևորվող փաստերը վկայակոչելու մասին:

Պարզեցված վարույթ կիրառելը, պարզեցված վարույթը դադարեցնելը: Պարզեցված վարույթ կիրառելու դատավարական կարգը կախված է վարույթի տվյալ տեսակը կիրառելու հիմքերից (ՔԴՕ 298 հոդվ., մաս 1):

Հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջ ներկայացված լինելու պարագայում առաջին ատյանի դատարանը գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցը լուծում է *հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ*: Նույն կարգով է լուծվում գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցը նաև այն դեպքերում, երբ պարզեց-

ված կարգով քննության ենթակա պահանջից ածանցված են ընդհանուր հայցային վարույթի կարգով քննության ենթակա պահանջներ:

Գումարի բռնագանձման հետ չկապված կամ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող պահանջի կապակցությամբ հարուցված գործերով ՔԴՕ 297-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում պարզեցված վարույթը կիրառում է մինչև նախնական դատական նիստի ավարտն *առանձին ակտի ձևով որոշմում* կայացնելու միջոցով:

Բոլոր դեպքերում պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման մեջ պետք է նշվի եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը (298 հոդվ., մաս 2):

Պարզեցված վարույթի կարգով հայցադիմումը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստում գործով պարզեցված վարույթ կիրառելու մասին դատարանի որոշումները գործին մասնակցող անձանց ուղարկվում են ընդհանուր կարգով: Դրանք ենթակա են հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում (ՔԴՕ 298 հոդվ., մաս 3):

Օրենքը սահմանում է, որ պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման հետ մեկտեղ գործին մասնակցող անձին պետք է ուղարկվի գրավոր պարզաբանում՝ դատարանի որոշումը ստանալուց հետո կատարման ենթակա գործողությունների, դրանց կատարման ժամկետների և չկատարելու հետևանքների մասին (ՔԴՕ 298 հոդվ., մաս 4):

ՔԴՕ 299-րդ հոդվածը սահմանում է այն գործողությունները, որոնք պետք է կատարեն գործին մասնակցող անձինք գործը պարզեցված վարույթի կարգով քննելու վերաբերյալ որոշումը ստանալուց հետո:

Գործի լուծման համար անհրաժեշտ փաստական և ապացուցողական նյութի լրիվությունը, ինչպես նաև դրա ներկայացման օպերատիվությունն ապահովելու համար ՔԴՕ-ով սահմանվել է

կողմերի միջնորդությունները, չհայտարարված պահանջները, ինչպես նաև նրանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը և դրանք հիմնավորող ապացույցները սահմանված ժամկետներում ներկայացնելու պահանջը և սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված դատավարական նյութը չընդունելու դատարանի լիազորությունը: Կարգավորման հիմքում դրվել է Անդրազգային սկզբունքների 7-րդ հոդվածում ձևակերպված ելակետային դրույթը, համաձայն որի՝ «ողջամիտ ժամկետներում վեճի վերաբերյալ վճիռ կայացնելու դատարանի պարտականության կատարման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով ընթացակարգային կանոններով և դատարանի կարգադրություններով կարող են սահմանվել ողջամիտ ժամկետներ և դատավարական սանկցիաներ՝ կողմերի և նրանց ներկայացուցիչների նկատմամբ նման կանոնները և կարգադրությունները չպահպանելու համար, ինչը չի կարող ներման արժանանալ առանց հիմնավոր պատճառի»:

Ըստ այդմ՝ ՔԴՕ 299-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվել է, որ գործին մասնակցող անձանց միջնորդությունները, ինչպես նաև նրանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող են ներկայացվել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասով պարզեցված վարույթի շրջանակներում հակընդդեմ հայց ներկայացնելու համար սահմանվել է հատուկ ժամկետ. պատասխանողը հակընդդեմ հայց կարող է ներկայացնել պարզեցված վարույթ կիրառելու մասին դատարանի որոշումը ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում:

Ընդ որում, ելնելով գործի առանձնահատկություններից, գործին մասնակցող անձի միջնորդությամբ վերոնշյալ ժամկետները դատարանի որոշմամբ կարող են երկարաձգվել:

ՔԴՕ 299-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սահմանված

Ժամկետների խախտմամբ ներկայացված դատավարական փաստաթղթերը և ապացույցները դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացնող անձանց՝ բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

Նման կարգավորումը նպատակ է հետապնդում ապահովելու գործին մասնակցող անձանց կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական և ապացուցողական նյութի ներկայացումը լրիվ ծավալով և այնպիսի ժամկետներում, որոնք թույլ կտան դատարանին բավականին սեղմ ժամկետում կայացնել եզրափակիչ դատական ակտ: Սահմանված դատավարական սանկցիան, իր հերթին, էապես նպաստում է կողմերի դատավարական կարգապահության աստիճանի բարձրացմանը և նվազագույնի է հասցնում կողմերի՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստեր վկայակոչելու և դրանք հաստատող ապացույցներ ներկայացնելու իրավունքների չարաշահման հնարավորությունը: Բացի այդ՝ սահմանված ժամկետում ներկայացված փաստական և ապացուցողական նյութի վերլուծությունը դատարանին հնարավորություն է տալիս լրացված դատավարական նյութի հիման վրա ևս մեկ անգամ ստուգել պարզեցված վարույթի կարգով տվյալ գործը քննելու թույլատրելիությունը:

Հաշվի առնելով այն, որ ՔԴՕ 299-րդ հոդվածով նախատեսված գործողությունների կատարման արդյունքում դատավարական իրավիճակը կարող է այնպես փոխվել, որ ի հայտ գա գործը պարզեցված վարույթի կարգով քննելուն խոչընդոտող որևէ հանգամանք, ՔԴՕ 301-րդ հոդվածը նախատեսել է **պարզեցված վարույթը դադարեցնելու** և ընդհանուր հայցային վարույթի անցում կատարելու հիմքեր: Մասնավորապես սահմանվել է. «Եթե սույն օրենսգրքի 297-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հանգամանքներն ի հայտ են եկել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը կայացնելուց հետո, բայց ոչ ուշ, քան

մինչև եզրափակիչ դատական ակտ հրապարակելը, դատարանը որոշում է կայացնում գործն ընդհանուր հայցային վարույթի կարգով քննելու մասին և սույն օրենսգրքի 166-րդ հոդվածով սահմանված կարգով հրավիրում է նախնական դատական նիստ»:

Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու կարգն ունի մի շարք էական առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են վարույթի տվյալ տեսակի պարզեցված բնույթով:

Նախ՝ ի տարբերություն ընդհանուր հայցային վարույթի՝ ՔԴՕ-ը սահմանում է գործի քննությունն ու լուծումը որոշակի ժամկետում ավարտելու իմպերատիվ պահանջ: Մասնավորապես, ըստ 300-րդ հոդվածի 2-րդ մասի, առաջին ատյանի դատարանը պարզեցված վարույթի կարգով գործի քննության արդյունքում եզրափակիչ դատական ակտը պետք է կայացնի և հրապարակի պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից **չորս ամսվա ընթացքում**²³:

Երկրորդ՝ գործի քննությունը պարզեցված վարույթի կարգով, որպես կանոն, իրականացվում է **առանց դատական նիստի հրավիրելու**՝ գրավոր ընթացակարգով (ՔԴՕ 300 հոդվ., մաս 1):

Ինչպես վերն արդեն նշվել է, գործը պարզեցված վարույթով քննելու ընթացակարգի հիմքում դրվել է այն ելակետային գաղափարը, որ վարույթի տվյալ տեսակի շրջանակներում գործի քննությունը պետք է իրականացվի առանց բանավոր լուսմներ կազմակերպելու՝ գրավոր ընթացակարգով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ծագում է գործին մասնակցող անձանց հետ ներկայացված ապացույցների հետ կապված որոշակի հարցեր քննարկելու կամ

²³ Նշված ժամկետը որոշվել է այն հաշվարկով, որ հայցի ապահովման միջնորդությունը կատարելու և գործին մասնակցող անձանց ծանուցումն իրականացնելու համար կարող է պահանջվել մինչև մեկական ամիս, գործին մասնակցող անձանց միջնորդությունները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ կատարելու համար ըստ օրենքի պետք է տրամադրվի 1 ամիս: Եվս 1 ամիս տևողությամբ ժամկետ էլ նախատեսվել է գործով վճռահատության և գործի քննության ընթացքում ծագած հնարավոր դատավարական բարդությունները հաղթահարելու համար:

կողմերի տնօրինչական գործողությունները ձևակերպելու անհրաժեշտություն: Ըստ այդմ՝ ՔԴՕ 300-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվել է դատական նիստ հրավիրելու անհրաժեշտություն բոլոր այն դեպքերում, երբ՝

1) դատարանը եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ²⁴,

2) ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն,

3) հայցվորը հրաժարվել է պահանջից,

4) կողմերը կնքել են հաշտության համաձայնություն²⁵:

Գործնական կարևոր նշանակություն ունի պարզեցված վարույթի կարգով գործի քննությունն իրականացնելիս ստացված միջնորդությունների լուծման դատավարական կարգը:

Պարզեցված վարույթի կարգով գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձինք կարող են ներկայացնել տարաբնույթ միջնորդություններ: Դրանք պետք է քննվեն և լուծվեն պարզեցված

²⁴ Հարկ է նկատի ունենալ, որ պարզեցված վարույթի շրջանակներում դատական նիստը չի հրավիրվում հավաքված ապացուցողական նյութն ըստ էության հետազոտելու նպատակով: Այստեղ դատարանի խնդիրը չէ՝ ապահովել ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտությունը դատական նիստում: Պարզեցված վարույթի կարգով նիստը հրավիրվում է բացառապես վկայակոչված առանձին հանգամանքների կամ գործում առկա առանձին ապացույցների վերաբերյալ գործին մասնակցող անձանցից որոշ պարզաբանումներ ստանալու համար: Նման նիստում դատարանը կարող է պահանջել ներկայացնելու պատճենի ձևով ներկայացված փաստաթղթերի բնօրինակները, օտարալեզու փաստաթղթերի թարգմանությունները, կողմերի հետ քննարկել վարույթը կասեցնելու, կարճելու, հայցն առանց քննության թողնելու հիմքերի առկայությունը, գործի քննությանն այլ անձանց ներգրավելու անհրաժեշտությունը, պարզեցված վարույթի կիրառումը բացառող այլ հանգամանքները և այլն:

²⁵ 2-4-րդ կետերում նշված հիմքերով դատական նիստ հրավիրելու անհրաժեշտությունը պայմանավորված է նշված տնօրինչական գործողություններն օրենքով կանխորոշված որոշակի ընթացակարգով քննելու և ձևակերպելու անհրաժեշտությամբ (տե՛ս ՔԴՕ 151 հոդվ., 168 հոդվ., 183 հոդվ., մաս 9):

վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՔԴՕ 299-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ պարզեցված վարույթի շրջանակներում ցանկացած միջնորդություն պետք է ներկայացվի պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Հակառակ պարագայում նման միջնորդությունը դատարանի որոշմամբ վերադարձվում է այն ներկայացնող անձին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը (299 հոդվ., մաս 4): Ուշագրավ է, որ նշված սահմանափակումն անմիջականորեն վերաբերում է ոչ միայն ապացույցների ձեռքբերմանն ուղղված, այլ նաև հայցային վաղեմություն կիրառելու, հայցի առարկան կամ հիմքը փոխելու, հայցից հրաժարվելու, վեճը սպառվելու կամ հաշտության համաձայնություն կնքելու հիմքով վարույթը կարճելու, որևէ այլ դատավարական գործողություն կատարելու վերաբերյալ միջնորդություններին:

Կարևոր է նկատի ունենալ, որ օրենքը չի նախատեսում քննարկվող ժամկետը լրանալուց հետո հրավիրված դատական նիստի ընթացքում ևս միջնորդություններ ներկայացնելու հնարավորություն: Ինչպես բխում է ՔԴՕ 300-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից, հրավիրված դատական նիստի ընթացքում կատարվող գործողությունները չեն կարող դուրս գալ նախանշված շրջանակներից, ուստի դատական նիստի օգտագործումն այլ գործողություններ կատարելու նպատակով պետք է համարել անթույլատրելի:

Եզրափակիչ դատական ակտի առանձնահատկությունները մեծապես պայմանավորված են վարույթը թեթևացնելու, պարզեցնելու և իրավունքի պաշտպանության գործընթացն արագացնելու անհրաժեշտությամբ: Այստեղ առանձնահատուկ կարգ է սահմանված եզրափակիչ դատական ակտի պատճառաբանման, օրինական ուժի մեջ մտնելու և բողոքարկելու համար:

Նախ նշենք, որ ՔԴՕ նախագծի մշակման փուլում որոշում կայացվեց հրաժարվել պարզեցված վարույթի կարգով քննվող գործով կայացված **վճռին ներկայացվող պահանջները** էականորեն «թեթևացնելու» առաջարկից²⁶ ելնելով այն մտավախությունից, որ դա կարող է մեկնաբանվել որպես պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքի խախտում: Այդուհանդերձ, պարզեցված վարույթի մասին կանոնների կիրառման շուրջ մեկամյա փորձը և քննարկվող հարցի խորը գիտագործնական վերլուծությունը հիմք ընդունելով՝ օրենսդիրը 2019 թ. հուլիսի 1-ի օրենքով սահմանեց պարզեցված վարույթի կարգով կայացվող վճռի պատճառաբանմանը ներկայացվող խիստ նվազեցված պահանջներ:

Մասնավորապես, ՔԴՕ 302-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվեց ընդհանուր կանոն առ այն, որ պարզեցված վարույթի կարգով գործի քննության արդյունքում կայացվող վճռի պատճառաբանական մասը պարունակում է *նշում հայցվորի փաստարկները դատարանի պատճառաբանություն համարելու վերաբերյալ*, ինչպես նաև գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ դատարանի պատճառաբանությունը: Նման կարգավորմամբ, ըստ էության, պարզեցված վարույթի կարգով քննվող գործերով կայացվող վճիռների նկատմամբ սահմանվել է պատճառաբանման «նվազագույն» ստանդարտ, որը բացառում է ՔԴՕ 192-րդ հոդվածի 4-րդ մասի 1-5-րդ կետերի կիրառելիությունը և դատարանի վրա դնում է պարտականություն՝ հայցն ամբողջությամբ բավարարելու դեպքում վճռի նկարագրական մասը շարադրելուց անմիջապես հետո՝

1) որպես պատճառաբանություն (վճռի փաստական և իրավական հիմք)՝ նշում կատարել հայցվորի փաստարկները դատարանի պատճառաբանություն համարելու վերաբերյալ,

2) պատճառաբանել գործին մասնակցող անձանց միջև դա-

²⁶ St'u Reform of the Armenian Code of Civil Procedure, Report by prof. dr. C. H. van Rhee, Maastricht University, November 2015, էջ 10:

տական ծախսերի բաշխումը:

Ըստ ՔԴՕ 302-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վճռի պատճառաբանման տվյալ ստանդարտը կիրառելի չէ այն դեպքերում, երբ՝

ա) գործի քննության ընթացքում հայցի դեմ ներկայացվել է առարկություն,

բ) հայցը բավարարվել է մասնակի,

գ) հայցը մերժվել է:

Նշված սահմանափակումները պայմանավորված են ՔԴՕ 9-րդ հոդվածով սահմանված և արդար դատաքննության իրավունքից բխող՝ գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված բոլոր փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին դատական ակտում անդրադառնալու դատարանի պարտականությամբ:

Այդուհանդերձ, հաշվի առնելով պարզեցված վարույթի կարգով քննվող գործերի առանձնահատկությունները և վարույթի տվյալ տեսակի նպատակները (դատարանի ծանրաբեռնվածության և դատական գործի ծախսատարության նվազեցում)՝ օրենսդիրը քննարկվող դեպքերի համար սահմանել է պատճառաբանման «միջին ստանդարտ»։ ՔԴՕ 302-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով դատարանին տրվել է հնարավորություն վճիռը պատճառաբանելիս ղեկավարվել ոչ թե ՔԴՕ 192-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված, այլ նվազեցված պահանջներով: Մասնավորապես ՔԴՕ քննարկվող դեպքերի համար նախատեսվեց, որ պարզեցված վարույթի կարգով կայացված վճռի պատճառաբանական մասում նշվում են՝

1) դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները,

2) ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները,

3) այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները,

4) հղում այն օրենքներին և այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս,

5) գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի

բաշխման վերաբերյալ պատճառաբանությունները:

Ըստ էության վճռի պատճառաբանման «միջին ստանդարտ»-ի էությունը հանգում է նրան, որ, ի տարբերություն ընդհանուր կազով կայացվող վճռի, պազեցված կարգով գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս դատարանն ազատվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը դատական ակտում ցույց տալու և կիրառելի իրավունքի վերաբերյալ վերլուծություն կատարելու պարտականությունից, այդ թվում՝ պարտավոր չէ պատճառաբանել, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը (փոխարենը, առանց բովանդակությունը վերարտադրելու, պետք է պարզապես հղում կատարվի այն իրավական նորմերին, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս): Բացի դրանից՝ պատճառաբանման նման ստանդարտի պայմաններում դատարանը պարտավոր չէ անդրադառնալ գործին մասնակցող անձանց բոլոր փաստարկներին և իրավական հիմքերին, ինչպես նաև արտացոլել բոլոր այն դատողությունները, որոնք կապված են փաստի ապացուցման ենթակա լինելու, փաստը հաստատող ապացույցների բավարարության և արժանահավատության հետ (փոխարենը, բավարար է ցույց տալ այն ապացույցները, որոնց հիման վրա դատարանը հաստատված կամ հերքված է համարել այս կամ այն փաստը, ինչպես նաև շարադրել այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները):

Նկատի ունենալով, որ պարզեցված կարգը ենթադրում է ոչ միայն գործերի արագ քննություն և լուծում, այլ նաև կայացված դատական ակտի օպերատիվ կատարում²⁷, ՔԴՕ-ը սահմանել է պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտի ***օրինական ուժի մեջ մտնելու և դրա դեմ վերաքննիչ բողոք բերելու կրճադ ժամկետներ***: Մասնավորապես նախատեսվել է, որ

²⁷ Տե՛ս **Матулевич В.**, Революция в упрощенном производстве, «Юридический справочник руководителя», М., 2012, август, <http://delo-press.ru/articles.php?n=10857>:

պարզեցված վարույթի կարգով կայացված վճիռը, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին որոշումն օրինական ուժի մեջ են մտնում այն հրապարակելու օրվանից տասնհինգ օր հետո, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում (302 հոդվ., մաս 3), իսկ հայցն առանց քննության թողնելու մասին որոշումը՝ այն հրապարակելու օրվանից յոթ օր հետո, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում (302 հոդվ., մաս 4):

Պարզեցված վարույթի կարգով կայացվող վերջնական դատական ակտի բողոքարկումը. թեև Եվրոպական կանոնակարգի 17-րդ հոդվածը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(95)5 և R(81)7 հանձնարարականները²⁸ թույլ են տալիս բացառել փոքր չափով դրամական հատուցումների վերաբերյալ գործերով կայացված վերջնական դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը, ՔԴՕ-ը մշակելիս, հաշվի առնելով դատական ակտերի բողոքարկելիության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը²⁹, որոշում կայացվեց նման քայլի չդիմել և բավարարվել վերաքննիչ բողոքարկման կրճատ ժամկետների սահմանմամբ: Մասնավորապես ՔԴՕ 362-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով սահմանվել է, որ պարզեցված վարույթի կարգով կայացված վճռի կամ վարույթը կարճելու մասին որոշման դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակելու օրվանից տասնհինգօրյա, իսկ հայցն առանց քննության թողնելու մասին որոշման դեմ՝ այն հրապարակելու օրվանից յոթնօրյա ժամկետում:

²⁸ Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168050e7e4>,

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505f3c>:

²⁹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 18.06.12 թ. թիվ ԱԴՈ-1037 որոշումը:

III. ԱՐԱԳԱՑՎԱԾ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Արագացված դատաքննությունը կարգավորվել է ՔԴՕ-ի նույնանուն վերտառությամբ 42-րդ գլխի շրջանակներում, որն ընդգրկում է 303-306-րդ հոդվածները:

Արագացված դատաքննության ինստիտուտը նոր չէ: Այն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն է ներմուծվել դատաիրավական բարեփոխումների առաջին փուլի շրջանակներում 1998 թ. մայիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունմամբ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն 28.02.1984 թ. ընդունել է թիվ R/84/5 հանձնարարականը, որով սահմանել է պարտատիրոջ իրավունքների առավել արդյունավետ, ճկուն և արագ պաշտպանության կառուցակարգեր ներդնելու պահանջ: Փաստաթղթին կից սկզբունքներով նախատեսվում էր, որ քաղաքացիական դատավարությունում անհրաժեշտ է նախատեսել վեճի լուծումն արագացնող կոնկրետ կանոններ, որոնք թույլ կտան անհետաձգելի կամ անվիճելի դեպքերում թեթևացնել դատական ընթացակարգը, ապահովել խախտված կամ խախտման վտանգի տակ գտնվող իրավունքների առավել արագ պաշտպանությունը՝ ապահովելով այդ կատեգորիաների գործերով արդարադատության մատչելիությունն ու արդյունավետությունը: Նշված հանձնարարականի հիմնական սկզբունքների հաշվառմամբ էլ 1998 թ. ՔԴՕ-ում նախատեսվեց արագացված դատաքննության ինստիտուտը, որի էությունը գործող ՔԴՕ-ում ընդհանուր առմամբ չի փոփոխվել:

Ի տարբերություն դատավարության ավանդական ընթացակարգի՝ **արագացված դատաքննությունը վարույթի պարզեցված տեսակ է, որն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում դատարանի որոշմամբ իրականացվում է գրավոր (փաստաթղթային) ընթացակարգով (բացառապես դատավա-**

րության մասնակիցների ներկայացրած և գործում առկա փաստաթղթերի հիման վրա՝ առանց դատական նիստ հրավիրելու կամ արդեն ընթացող գործի քննությունը դադարեցնելով (եթե նման որոշում կայացվում է դատական նիստում), որն ավարտվում է գործը լուծող վերջնական դատական ակտի կայացմամբ ու հրապարակմամբ: Նման վարույթի շրջանակներում դատարանը բանավոր ապացույցներ չի հետազոտում (կողմերին, վկաներին, փորձագետներին և մասնագետներին չի հարցաքննում), տեղազննություններ չի կատարում և դատական հանձնարարություններ չի տալիս, այլ սահմանափակվում է մինչև արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշում կայացնելու պահը կողմերի ներկայացրած բացատրությունների, առարկությունների և ապացույցների, ինչպես նաև գործում առկա փորձագիտական եզրակացությունների և այլ գրավոր նյութերի հետազոտմամբ ու գնահատմամբ:

Արագացված դատաքննությունը հիմնականում կիրառվում է այն գործերով, որոնք վերաբերում են չնչին գումարների բռնագանձման վերաբերյալ պահանջների (50000 դրամը չգերազանցող) կամ վիճահարույց չեն (հայցն ընդունվում է պատասխանողի կողմից, առարկություններ չեն ներկայացվում հայցի դեմ և այլն), ծանրաբեռնված չեն ապացուցման ենթակա հանգամանքներով և ապացուցողական նյութով: Արագացված դատաքննությունը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձինք գրավոր համաձայնություն են ներկայացնում՝ գործով արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ կամ նախապես տեղեկացնում են դատարանին գործի քննությանը չմասնակցելու մասին:

Չնայած արագացված դատաքննության ինստիտուտում 2007 թվականին կատարվեցին որոշ փոփոխություններ, այնուամենայնիվ, այն լայն պրակտիկ կիրառություն այդպես էլ չունեցավ: Դա հիմնականում պայմանավորված էր տվյալ վարույթի ոչ պատշաճ իրավական կարգավորմամբ, ինչի մասին վկայում են օրենքում մի

շարք գնահատողական և անորոշ հասկացությունների օգտագործումը, վարույթի տվյալ տեսակը կիրառելու թույլատրելիության պայմանների բացակայությունը և այլն³⁰:

Եվրոպական լավագույն փորձի ուսումնասիրության, առկա դատական պրակտիկայի, ինչպես նաև դատավորների հետ անցկացված քննարկումների և հարցումների ամփոփման հիման վրա գործող ՔԴՕ-ի՝ արագացված դատաքննության ինստիտուտում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք, չփոփոխելով դրա էությունն ու հիմնական առաքելությունը, շատ ավելի դյուրին են դարձրել վարույթի տվյալ տեսակի պրակտիկ կիրառությունը և պարզեցված մյուս ընթացակարգերի հետ մեկտեղ էապես կարող են նպաստել դատարանների ծանրաբեռնվածության խնդրի լուծմանը և դատական պաշտպանության արդյունավետության բարձրացմանը:

Արագացված դատաքննության թույլատրելիության պայմանները և կիրառման հիմքերը. ՔԴՕ 303-րդ հոդվածը նախատեսում է, որ դատարանն իրավունք ունի կիրառել արագացված դատաքննություն, եթե բացակայում է *գործին մասնակցող անձանց, վկաներին, փորձագետին կամ մասնագետին հարցաքննելու, ապացույցը գտնվելու վայրում հետազոտելու կամ դատական հանձնարարություններ տրալու անհրաժեշտություն*: Տվյալ սահմանափակումը նախատեսվել է այն նույն նկատառումներով, որոնցով այն նախատեսվել է որպես պարզեցված վարույթը բացառող հանգամանք, ինչի մասին մանրամասն խոսել ենք վերը:

Նույն հոդվածով նախատեսվել են արագացված դատաքննություն կիրառելու թվով յոթ հիմքեր, որոնցից յուրաքանչյուրի առկայության դեպքում դատարանը կարող է կիրառել արագացված դատաքննություն: Մասնավորապես սահմանվել է, որ գործը կարող

³⁰ Նախկին ՔԴՕ-ում արագացված դատաքննության իրավական կարգավորման հիմնական թերությունների մասին առավել մանրամասն տես **Պետրոսյան Ռ. Գ.**, նշված աշխ., էջ 433-451:

է քննվել արագացված դատաքննության կարգով, եթե՝

1) ներկայացվել է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գումար բռնագանձելու վերաբերյալ պահանջ.

2) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պատասխանողը չի վիճարկում դրա վավերությունը.

3) ներկայացվել է ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ պահանջ.

4) ներկայացվել է հաշվարկված և չվճարված աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարումներ բռնագանձելու վերաբերյալ պահանջ.

5) գործին մասնակցող անձինք գրավոր տեղեկացրել են դատարանին դատաքննությանն իրենց չմասնակցելու մասին.

6) գործին մասնակցող անձինք գրավոր համաձայնություն են ներկայացրել գործով արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ.

7) գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն անվիճելի են, և գործի լուծման համար դատարանի կողմից անհրաժեշտ է պարզել բացառապես իրավունքի հարցեր, կամ պատասխանողն ընդունել է հայցապահանջները:

Ուշագրավ է, որ ՔԴՕ-ը հրաժարվել է նախկին ՔԴՕ-ի 125-րդ հոդվածում առկա «գործի էությունից բխում է դրա անհապաղ քննության անհրաժեշտությունը» հիմքից՝ նկատի ունենալով գործնականում առանց արդար դատաքննության իրավունքը ոտնահարելու այն կիրառելու անհնարինությունը:

Հասկանալի է, որ արագացված դատաքննություն կիրառելու տվյալ հիմքի ներմուծումը պայմանավորված է եղել որոշ կատեգորիայի գործերով դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության անհետաձգելիությամբ, արդարադատության նպատակային գործողությունը երաշխավորելու և վերը հիշատակված հանձնարարականի պատվիրանները կատարելու անհրաժեշտությամբ:

Անհերքելի է, որ մի շարք դեպքերում ներկայացված պահանջներով դատարան դիմած անձին իրավական պաշտպանություն անհապաղ չտրամադրելը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ նրա և արդարադատության շահերի համար, անիմաստ դարձնել դատական պաշտպանության դիմելը, իմաստագրել այդ գործի դատական քննության նշանակությունը՝ իրավունքի դատական պաշտպանությունը դարձնելով անարդյունավետ: Սակայն կարծում ենք, որ նշված խնդիրները չպետք է լուծվեն արագացված դատաքննության կառուցակարգի միջոցով: Վերջինս նախատեսված չէ կողմերի «իրական» մրցակցության պայմաններում իրավունքի մասին վեճերը լուծելու համար, մինչդեռ հետաձգում չհանդուրժող գործերը մեծամասամբ չեն կարող լուծվել՝ շրջանցելով ավանդական դատավարության մոդելը: Հետևաբար, դրանցով արագացված դատաքննություն կիրառելն անխուսափելիորեն կխախտի կողմերի՝ Սահմանադրությամբ և ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը: Փոխարենն ավելի նպատակահարմար կլինի օտարերկրյա փորձի հաշվառմամբ մտածել եվրոպական որոշ երկրների դատավարական օրենսդրություններով նախատեսված նախնական դատական պաշտպանության միջոցների ներդրման ուղղությամբ³¹:

ՔԴՕ-ով չեն նախատեսվել նաև նախկինում օրենքով սահմանված «հայցն ակնհայտորեն հիմնավորված է» և «հայցն ակնհայտորեն անհիմն է» հասկացությունները, քանի որ դրանք գնահատողական բնույթ ունեն, խիստ անորոշ են և հակասական մեկնաբանությամբ

³¹ Նախնական դատական պաշտպանության միջոցների լավ օրինակ կարելի է գտնել Նիդերլանդներում: Նախատեսված լինելով հրատապ դեպքերի համար՝ դրանք կարող են կիրառվել անձի դիմումով նախքան գործի հարուցումը: Այդ միջոցներից են նախնական դատական արգելքը և նախնական դատական հրամանը, որոնք ըստ էության միջանկյալ վճիռներ են և վեճն ըստ էության չեն լուծում, սակայն մինչև սովորական ընթացակարգով վեճի ըստ էության լուծումը ժամանակավորապես պաշտպանում են դատարան դիմած անձի իրավունքները: Ավելի մանրամասն տե՛ս **M. van Hooijdonk & P. Eijsvogel**, *Litigation in the Netherlands*, Kluwer 2009, էջ 87ff:

յունների տեղիք են տալիս³²:

Ակնհայտ է մեկ բան՝ հայցը որպես «հիմնավոր» որակելու համար դատարանը ֆորմալ դատավարության բոլոր պահանջների և կողմերի դատավարական իրավունքների պահպանմամբ պետք է ստանա առնվազն հետևյալ հարցերի պատասխանները՝ 1) նման փաստական հանգամանքների առկայության դեպքում որքանո՞վ է իրավաչափ նման պահանջների ներկայացումը, 2) որքանո՞վ է պատշաճ նման պահանջներ կայացնող կողմը և այն կողմը, որին տվյալ պահանջը ներկայացվել է, 3) հայցի հիմքում դրված հանգամանքները և դրանք հաստատող ապացույցները բավարա՞ր են արդյոք գործով վճիռ կայացնելու համար, 4) այդ հանգամանքները և դրանք հաստատող ապացույցները արդյո՞ք անվիճելի են: Արագացված դատաքննության կանոնները կիրառելու համար նշված հարցերի պատասխանները պետք է «ակնհայտ» լինեն, չպահանջեն բարդ ապացուցողական գործողություններ և ստացվեն պատշաճորեն ձևակերպված և դատարան ներկայացված փաստաթղթերից, որոնց իսկությունը, վավերությունը և բովանդակությունը կասկած չի առաջացնում ո՛չ դատարանի և ո՛չ էլ կողմերի մոտ: Այլ կերպ ասած՝ պահանջի հիմքում ընկած փաստական հանգամանքները դատարանի կողմից պետք է որակվեն որպես անվիճելի:

Քանի որ ՔԴՕ-ն արագացված դատաքննություն կիրառելու հիմքերին է դասել այն իրավիճակները, երբ գործով ապացուցման առարկայի կազմի մեջ մտնող փաստերն անվիճելի են³³, և գործի լուծման համար դատարանի կողմից անհրաժեշտ է պարզել բացառապես իրավունքի հարցեր, «հայցն ակնհայտորեն հիմնավորված է» ձևակերպումն ըստ էության այլևս որևէ առաքելություն չունի:

Ինչ վերաբերում է «հայցն ակնհայտորեն անհիմն է» ձևակերպմանը, ապա նշենք, որ դրա բառացի մեկնաբանությունը թույլ է

³² Արագացված դատաքննություն կիրառելու նշված հիմքերի վերլուծությունը տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.**, նշված աշխ., էջ 441-443:

³³ Փաստն անվիճելի ճանաչելու հիմքերը նախատեսված են ՔԴՕ 61-րդ հոդվածի 5-րդ մասով:

տալիս այդպիսին համարել այն հայցապահանջը, որի հիմքում դրված չեն օրենքով արժեքավորվող հանգամանքներ կամ թեև դրված են նման հանգամանքներ, սակայն դրանք չեն հաստատվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով: ԴՆԽ-ի բնորոշմամբ հայցը պետք է համարել «ակնհայտ անհիմն» այն դեպքերում, երբ «հայցվորը չի ներկայացրել հայցապահանջը հիմնավորող ապացույցներ և այն չի կարող հիմնավորվել որևէ այլ ապացույցներով»³⁴: Կարծում ենք՝ նման մեկնաբանությունը, հենված լինելով դատական պրակտիկայում հանդիպող որոշ պարզ օրինակների վրա, գործերի մեծամասնությամբ կիրառելի չէ: Թե՛ նախկին և թե՛ գործող կարգավորումների ուժով կողմն իր ապացուցելու և ապացույցներ ներկայացնելու պարտականությունը սկզբունքորեն կարող է իրականացնել վարույթի ողջ ընթացքում՝ մինչև գործի դատաքննությունն ավարտելը: Նշվածը վկայում է այն բանի մասին, որ հայցապահանջը հիմնավորող ապացույցներ չներկայացնելն ինքնին արագացված դատաքննություն կիրառելու հիմք դիտարկելը սխալ է:

Հաճախ դատական պրակտիկայում հայցը որակվում էր ակնհայտորեն անհիմն նաև այն դեպքերում, երբ դատարանը ներկայացված ապացույցների հիման վրա գալիս էր հետևության, որ հայցվորը ոչ պատշաճ է՝ չունի պատասխանողին նման պահանջ ներկայացնելու իրավունք կամ դատարան դիմելու հիմք հանդիսացող շահագրգռվածություն: Արագացված դատաքննության հիմքերը քննարկելիս առաջարկվում էր այդ իրավիճակը ևս նախատեսել հիմքերի կազմում, որը, սակայն, չընդունվեց: Կարծում ենք, որ հայցվորի ենթադրյալ ոչ պատշաճությունը չի կարող հիմք հանդիսանալ ներկայացված և վարույթ ընդունված հայցն ակնհայտորեն անհիմն որակելու համար, եթե հայցվորի ոչ պատշաճությունը

³⁴ Տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 1999 թ. մարտի 27-ի թիվ 9 որոշումը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-129 հոդվածներով նախատեսված արագացված դատաքննության ինստիտուտի կիրառման կարգի մասին», http://www.court.am/files/news/13_am.pdf: Ներկայումս չի գործում:

«ակնհայտ» չէ, վիճարկվում է նրա կողմից (հանդիսանում է վեճի առարկա), պահանջում է ներկայացված ապացույցների հետազոտում և գնահատում: Նման իրավիճակներում վեճը պետք է քննվի ու լուծվի դատարանի կողմից ֆորմալ դատավարության բոլոր պահանջների և կողմերի դատավարական իրավունքների պահպանմամբ, այլ ոչ պարզեցված եղանակով՝ արագացված դատաքննության կարգով: Նման իրավիճակներում «ակնհայտության» մասին խոսելն ավելորդ է: Այլ մոտեցման պարագայում կոպտորեն խախտվում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը, որը դատարան դիմած սուբյեկտին տալիս է արդարացի և հրապարակային դատաքննության բացարձակ հնարավորություն, այն դեպքերում, երբ քննվում է «իր գործը» (վեճը), «որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները» (այդ թվում՝ դրանց առկայությունը կամ բացակայությունը):

Հայցվորի ոչ պատշաճությունը հայցը «ակնհայտորեն անհիմն» որակելու հիմք կարող է հանդիսանալ միայն այն պարագայում, երբ հայցվորն ընդունում է իր ոչ պատշաճությունը և հրաժարվում է հայցից՝ դրանով իսկ հաստատելով իրավունքի մասին վեճի բացակայությունը: Սակայն նման դեպքերում դատարանը պետք է ոչ թե կիրառի արագացված դատաքննություն, այլ կարճի գործի վարույթը (ՔԴՕ 182 հոդվ., մաս 1, կետ 7):

Արագացված դատաքննություն կիրառելը. արագացված դատաքննություն կիրառելու մասին դատարանն առանձին ակտի ձևով կայացնում է **որոշում**, որը ոչ ուշ, քան կայացնելու հաջորդ օրն ուղարկում է գործին մասնակցող անձանց (304 հոդվ, մաս 1, 4):

ՔԴՕ-ի 304-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է կանոն առ այն, որ դատարանը կարող է արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշում կայացնել գործի քննության ցանկացած պահի, սակայն ոչ շուտ, քան պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան ներկայացնելը, իսկ այն չներկայացվելու դեպքում՝ պատասխան ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտը:

Այլ կերպ ասած՝ արագացված դատաքննություն կարող է կիրառվել՝

1. պատասխանողից հայցադիմումի պատասխանը ստանալու, իսկ այդպիսին չներկայացնելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո, եթե արագացված դատաքննություն կիրառելու հիմքերն ակնհայտ են վարույթի տվյալ փուլում,

2. նախնական դատական նիստի ընթացքում, եթե արագացված դատաքննություն կիրառելու հնարավորությունն ի հայտ է գալիս նախնական դատական նիստում նախապատրաստական կամ կողմերի տնօրինչական գործողությունների կատարման արդյունքում (հայցի փոփոխում, պահանջների ընդունում, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ճշգրտում, ապացույցներ ձեռք բերելուն ուղղված միջնորդությունների բացակայություն և այլն),

3. դատաքննության ընթացքում, եթե արագացված դատաքննություն կիրառելու այս կամ այն հիմքը ծագում է դատավարության տվյալ փուլում և բացակայում է բանավոր ապացույցները հետազոտելու անհրաժեշտությունը (օրինակ՝ ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ գործով պատասխանողը հրաժարվում է հայրությունը վիճարկելու հետ կապված հակընդդեմ հայցից կամ ընդունում է հայցվորի ներկայացրած հայցապահանջները): Ընդ որում՝ նման որոշում գործնականում կարող է կայացվել նաև գործում առկա բանավոր ապացույցների հետազոտումն ավարտելուց հետո (օրինակ՝ գործով նշանակված փորձագետին հարցաքննելուց կամ վկայի ցուցմունքը լսելուց հետո):

Քանի որ արագացված դատաքննության կիրառումը ենթադրում է գործի ըստ էության լուծում բանավոր դատաքննության փուլի շրջանցմամբ (այդ թվում՝ արդեն ընթացող դատաքննությունը դադարեցնելով), ՔԴՕ 305-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշման մեջ պետք է նշվի եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժա-

մանակը և վայրը:

Գործի լուծումը արագացված դատաքննության կարգով և վերջնական դատական ակտը. արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշման կայացման պահից դատարանն անցնում է եզրափակիչ դատական ակտի կայացմանը (305 հոդվ., մաս 1):

Եզրափակիչ դատական ակտը կայացվում է ընդհանուր պահանջների պահպանմամբ: Այն պետք է լինի օրինական, հիմնավորված, պատճառաբանված, բավարարի նման դատական ակտերին ներկայացվող այլ պահանջները՝ ներառյալ նրանք, որոնք վերաբերում են դատական ակտի բովանդակությանը:

ՔԴՕ 305-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ եզրափակիչ դատական ակտը պետք է **հրապարակվի** ոչ ուշ, քան արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշման կայացման օրվանից տասնհինգօրյա ժամկետում:

Արագացված դատաքննությունը դադարեցնելը և գործի քննությունը վերսկսելը. ՔԴՕ-ը նախատեսել է իրավիճակներ, երբ եզրափակիչ դատական ակտ կայացնելիս դատարանը կարող է վերսկսել գործի քննությունն ընդհանուր կարգով: Բնականաբար, նման դեպքերում արագացված դատաքննություն կիրառելու որոշմամբ նշանակված օրը դատական ակտի հրապարակում տեղի չի ունենում:

Եզրափակիչ դատական ակտ կայացնելիս դատարանը կարող է հանգել հետևության, որ տվյալ գործն արագացված դատաքննության կարգով լուծվել չի կարող, քանի որ առկա են հանգամանքներ, որոնք պարզելու համար անհրաժեշտ է գործի քննությունն անցկացնել ընդհանուր կարգով (օրինակ՝ կարող է ծագել տեղազննություն կատարելու, փորձագետին հարցաքննելու, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն և այլն): Վարույթին անհրաժեշտ ճկունություն հաղորդելու, ինչպես նաև դատարանին իր թերացումներն ուղղելու հնարավորություն ընձեռելու նկատառումներից ելնելով՝ օրենսդիրը դատարանին

հնարավորություն է ընձեռել նման դեպքերում դադարեցնել արագացված դատաքննությունը և գործի քննությունը շարունակել (վերսկսել) ընդհանուր կարգով: Արագացված դատաքննությունը դադարեցվում է, և գործի քննությունը շարունակվում է ընդհանուր կարգով նաև այն դեպքերում, երբ դատարանը վարույթ է ընդունում հակընդդեմ հայցը³⁵, ինչպես նաև վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի³⁶ հայցը (306 հոդվ., մաս 1):

Արագացված դատաքննության կիրառումը դադարեցնելու և գործի քննությունը ընդհանուր կարգով իրականացնելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում նշվում է դատական նիստի ժամանակը և վայրը: Ընդ որում՝ ՔԴՕ 306-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նման դեպքերում գործի քննությունն ընդհանուր կարգով պետք է իրականացվի այն պահից, երբ կայացվել էր արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշումը:

Պայմանավորված արագացված դատաքննության պարզեցված բնույթով, վարույթը թեթևացնելու, պարզեցնելու և իրավունքի պաշտպանության գործընթացն արագացնելու անհրաժեշտությամբ՝ ՔԴՕ-ով սահմանվել է նաև քննարկվող ընթացակարգով կայացվող եզրափակիչ դատական ակտերի՝ **օրինական ուժի մեջ մտնելու կրճաք ժամկետ**: Մասնավորապես սահմանվել է, որ արագացված դատաքննության կիրառմամբ կայացված եզրափակիչ

³⁵ ՔԴՕ 304-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատասխանողը հակընդդեմ հայց կարող է ներկայացնել մինչև առաջին ատյանի դատարանի կողմից եզրափակիչ դատական ակտ կայացնելը:

³⁶ Թեև ՔԴՕ 306-րդ հոդվածի 1-ին մասն ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի ներկայացրած հայցը վարույթ ընդունելը չի դիտարկում որպես արագացված դատաքննության կիրառումը դադարեցնելու հիմք, ՔԴՕ 37-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է մինչև եզրափակիչ դատական ակտ կայացնելը նման հայց ներկայացնելու երրորդ անձի իրավունքը: Անկասկած, եթե ներկայացված հայցն ընդունվում է վարույթ, գործն արագացված դատաքննության կարգով քննվել չի կարող:

դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում այն կայացնելու³⁷ օրվանից տասնհինգօրյա ժամկետում, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում (305 հոդվ., մաս 4): Ընդհանուր կանոնի ուժով հայցն առանց քննության թողնելու մասին եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից յոթ օր հետո (181 հոդվ., մաս 3):

Ուշագրավ է, որ թեև ՔԴՕ-ը սահմանել է արագացված դատաքննության կարգով կայացված եզրափակիչ դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու կրճատ ժամկետ, այն որևէ հատուկ դրույթ չի պարունակում եզրափակիչ դատական ակտը վերաքննության կարգով **բողոքարկելու ժամկետների** մասին: Կարծում ենք, որ պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտերի բողոքարկման համար սահմանված կրճատ ժամկետի օրինակով այստեղ ևս ճիշտ կլիներ նախատեսել, որ արագացված դատաքննության կարգով կայացված վճռի և գործի վարույթը կարճելու մասին որոշման³⁸ դեմ վերաքննիչ բողոք կարող է ներկայացվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

³⁷ Կարծում ենք՝ պետք է օգտագործվեր «հրապարակելու» բառը:

³⁸ Հայցն առանց քննության թողնելու մասին եզրափակիչ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը սահմանված է ՔԴՕ 362-րդ հոդվածի 4-րդ մասով, այն է՝ հրապարակման պահից յոթ օր:

IV. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹ

Վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է ՔԴՕ-ի «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերտառությամբ 43-րդ գլխի շրջանակներում, որում վարույթի տվյալ տեսակին նվիրվել են 307-314-րդ հոդվածները:

Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը³⁹ և նոր չէ քաղաքացիական դատավարությունում: Այն ներմուծվեց Հայաստանի իրավակարգ ԱԺ-ի կողմից 2004 թ. օգոստոսի 5-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով⁴⁰: Նշված օրենքի ընդունմամբ՝ ՀՀ 1998 թ. ՔԴՕ-ը լրացրեց նոր՝ «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերտառությամբ 36¹գլխով (հոդվածներ 204¹-204⁸), որը դարձավ այլընտրանքային վարույթ սովորական ընթացակարգով քննվող հայցային վարույթի համեմատ: Բացի այդ՝ նախկին ՔԴՕ-ի 13-րդ հոդվածում որպես քաղաքացիական գործերով կայացվող դատական ակտերի ինքնուրույն տեսակ՝ վճիռների և որոշումների հետ մեկտեղ նախատեսվեցին նաև վճարման կարգադրությունները:

Իր ներկա տեսքով կարգադրության վարույթը հայեցակարգային առումով գրեթե նույնական է ՌԴ ՔԴՕ-ի՝ «Դատական հրաման» վերտառությամբ 11-րդ գլխով և Գերմանիայի ՔԴՕ-ի՝ «Պարտքի մարումը դատական հրամանի կարգով» վերտառությամբ 7-րդ գրքով կարգավորվող դատական հրամանի ինստիտուտի հետ:

Որոշակի առանձնահատկություններով այն նախատեսված է նաև Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի և մի շարք այլ երկրների

³⁹ Այսուհետ նաև՝ «Կարգադրության վարույթ»:

⁴⁰ Տե՛ս ՀՀ ՊՏ, 2005/51(423), 12.08.05:

իրավական համակարգերում, որտեղ կուտակվել է քննարկվող տեսակի վարույթի կիրառման բավականին հարուստ փորձ:

Ընդհանուր առմամբ կարգադրության վարույթը կարող է բնորոշվել որպես **քաղաքացիական գործերի լուծման պարզեցված ընթացակարգի տեսակ, որի շրջանակներում դատարանը պարտավորոջ ներկայացրած դիմումի հիման վրա առանց դատական նիստ հրավիրելու և առանց գործն ըստ էության քննելու կայացնում է դատական ակտ (հրաման, կարգադրություն), որը չվիճարկվելու դեպքում ստանում է եզրափակիչ դատական ակտի՝ վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման:** Այս վարույթի կարգով դատական ակտ կայացնելու համար գործի փաստական հանգամանքները չեն պարզվում և չեն հաստատվում, որովհետև դատարանը պարտապանի դիրքորոշումը և պատճառաբանությունները չի քննարկում, գործի իրավաբանական որակումը չի տալիս: Դատական ակտ կայացնելիս դատարանը հենվում է միայն պահանջն առերևույթ (prima facie) հիմնավորված և ապացույցներով հաստատված լինելու փաստի վրա: Մյուս կողմից՝ այս ինստիտուտը թույլ է տալիս հաշվի առնել նաև պարտապանի շահերը, այսինքն՝ այն ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերը, որոնց դեմ հարուցվել է կարգադրության վարույթը, քանի որ եթե վճարման կարգադրությունը սահմանված կարգով վիճարկվում է, ապա այն կորցնում է ուժը (վերացվում է):

Վարույթի քննարկվող տեսակի կարևորությունը, արդյունավետությունը և կենսունակությունն ընդգծվում է մի շարք դատավարագետների կողմից⁴¹: Իր հերթին, նախկին ՔԴՕ-ի՝ «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերտառությամբ 36¹ գլխի կիրառման շուրջ տասնհինգամյա պրակտիկայի վերաբերյալ իրապարակված դատական վիճակագրության տվյալները ցույց են

⁴¹ Տե՛ս, օրինակ, **Жуйков В. М.**, Проблемы гражданского судопроизводства. М., 2001, էջ 62-63, Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. М. С. Шакарян, М.: изд. «Кодекс», էջ 242:

տալիս, որ վարույթի քննարկվող տեսակի գոյությունն արդարացված է, իսկ քաղաքացիական գործերի լուծման տվյալ պարզեցված ընթացակարգը՝ խիստ արդյունավետ: Այսպես՝ 2006 թվականին Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն արձակել են 24.974 վճարման կարգադրություններ, որոնցից չվիճարկվելու հիմքով օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 17.447-ը, 2007 թվականին՝ 49.540-ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 28.549-ը, 2014 թվականին՝ 58375 -ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 29.542-ը, 2015 թվականին՝ 61.899-ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 28.204-ը, 2016 թվականին՝ 50.215-ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 21.995-ը, 2017 թվականին՝ 77.525-ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 33.301-ը, 2018 թվականին՝ 66.530-ը, որոնցից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 28.080-ը⁴²:

Հարկ է նկատել, որ կարգադրության վարույթը կատարելագործելու և դրա կիրառումը խթանելու միտումը նկատվում է ոչ միայն ազգային մակարդակներում: Միջազգային կազմակերպությունները և անդրազգային կազմավորումները ևս կարևորում են քննարկվող ինստիտուտը: Այսպես՝ Եվրոպական Խորհրդարանը և Խորհուրդը 2006 թ. դեկտեմբերի 12-ին ընդունել է «Վճարման եվրոպական կարգադրության մասին» թիվ 1896/2006 կանոնակարգը, որի հիմնական նպատակն է պարզեցնել և արագացնել անվիճարկելի դրամական պահանջներին վերաբերող գործերի լուծումը՝ անդամ պետություններում վարույթը միասնականացնելու, վարույթի նվազագույն ստանդարտներ մշակելու և կայացված դատական ակտերի անխոչընդոտ կատարումն ապահովելու միջոցով (հոդվ.

⁴² Տե՛ս Առաջին ատյանի դատարանների կողմից վճարման կարգադրություն արձակելու վարույթների ընթացքի մասին տարեկան հաշվետվությունները // Դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայք՝ www.court.am:

1)⁴³: Նշված կանոնակարգում, ըստ էության, ամփոփվել է անվիճելի (չվիճարկվող) դրամական պահանջների քննության և լուծման եվրոպական լավագույն փորձը, որը, անկասկած, պետք է ծառայեր որպես ուղեցույց ՀՀ դատավարական օրենսդրության՝ կարգադրության վարույթին նվիրված նորմերի հետագա կատարելագործման ընթացքում: Կանոնակարգի առանձին դրույթներ հաշվի են առնվել ՔԴՕ-ի մշակման ընթացքում, որի արդյունքում կարգադրության վարույթը կանոնակարգող նորմերում կատարվել են մի շարք փոփոխություններ:

Կարգադրության վարույթի թույլատրելիության պայմանները:

ՔԴՕ-ի 307-րդ հոդվածով նախևառաջ սահմանվել են վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի թույլատրելիության երեք պայմաններ:

1) **Կարգադրության վարույթը թույլատրելի է միայն դրամական պահանջներով:** Նշվածից երևում է, որ, ի տարբերություն, օրինակ, ՌԴ ՔԴՕ-ի, վճարման կարգադրությունը թույլատրելի չէ պարտապանից շարժական գույք վերցնելու պահանջներով. այն թույլատրելի է բացառապես դրամական պահանջներով: Դրանով էլ թերևս պայմանավորված է այն հանգամանքը, որ քննարկվող վարույթի արդյունքում կայացվող դատական ակտն ի սկզբանե ստացել է ոչ թե «դատական հրաման» անվանումը, այլ անվանվել է «վճարման կարգադրություն»: Դրանով իսկ ընդգծվել է նշված դատական ակտի հիման վրա կատարվող պարտավորության դրամական բնույթը՝ բացառելով պարտապանից գույք պահանջելու, ոչ դրամական բնույթի գործողություն կամ որոշակի գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ պահանջներով քննարկվող վարույթը կիրառելու հնարավորությունը:

2) **Վճարման կարգադրություն կարող է արձակվել բացառապես այն պահանջով, որը որոշակի է:** Ընդ որում՝ ըստ ՔԴՕ-ի

⁴³Տե՛ս <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:32006R1896>

307-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պահանջը համարվում է որոշակի, եթե այն սահմանված է կողմերի համաձայնությամբ կամ կարող է ճշգրիտ որոշվել օրենքի կամ պայմանագրի հիման վրա: Հետևում է, որ վճարման կարգադրություն չի կարող արձակվել այնպիսի դրամական պահանջներով, որոնց չափը որոշելու համար ֆորմալ դատավարության կանոնների պահպանմամբ պետք է իրականացվեն դատավարական օրենսդրությամբ կարգավորվող որոշակի դատավարական գործողություններ՝ նշանակվի փորձաքննություն, հարցաքննվեն փորձագետներ, մասնագետներ, վկաներ, կատարվի իրեղեն ապացույցների զննություն և այլն:

3) Վճարման կարգադրություն չի կարող արձակվել, եթե ներկայացված պահանջը կապված է դեռևս չկատարված հանդիպական պարտավորությունների հետ:

Հանդիպական է այն պարտավորությունը, որի շրջանակներում կողմերից մեկի պարտականության կատարումը պայմանագրին համապատասխան պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ (Քաղ. օր. 367 հոդվ., մաս 1): Եվ քանի որ այն կողմը, որի վրա դրված է հանդիպական կատարումը, պարտավոր կողմի՝ պայմանագրով պայմանավորված պարտավորությունը սահմանված ժամկետում չկատարելու մասին ակնհայտորեն վկայող հանգամանքների առկայության դեպքում իրավունք ունի կասեցնել իր պարտավորության կատարումը կամ հրաժարվել այն կատարելուց (Քաղ. օր. 367 հոդվ., մաս 1), նրա դեմ վճարման կարգադրություն արձակելը չի թույլատրվում, քանի դեռ դատարան դիմած պարտատերը դիմումին կից չի ներկայացրել իր հանդիպական պարտավորությունը կատարելու փաստը հավաստող առերևույթ արժանահավատ ապացույցներ: Հակառակ պարագայում պահանջի առերևույթ հիմնավորված լինելը, որը դիմումը բավարարելու հիմքերից մեկն է, վճարման կարգադրությունն արձակելու պահին կլինեի խիստ կասկածելի:

Նախկին ՔԴՕ-ի 204.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմա-

նում էր կարգադրության վարույթի անթույլատրելիություն այն դեպքերում, երբ *«ներկայացված պահանջի հիմքում ընկած է վարկային պայմանագիրը, և նախատեսված տրոստադրույքը պայմանագրի կնքման պահին եղել է ավելի, քան օրենքով սահմանված տրոստադրույքը»*: Տվյալ սահմանափակումը գործող ՔԴՕ-ի 307-րդ հոդվածով չի նախատեսվել՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ պահանջի հիմքում ընկած գործարքի առերևույթ հակասելն օրենքի իմպերատիվ պահանջներին ՔԴՕ-ը բոլոր դեպքերում դիտարկել է որպես վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու հիմք (310 հոդվ., մաս 1, կետ 4):

Կարծում ենք, որ հարկ է բացառել նաև վճարման կարգադրություն արձակելու հնարավորությունն այն դեպքերում, երբ ներկայացված պահանջը կապված է համապարտ պարտավորության հետ, քանի որ ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարանը չի կարող դատական ակտ կայացնել մի անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, որը չի ներգրավվել գործի քննությանը:

Համապարտ պարտապանի դեմ վճարման կարգադրություն արձակելու անթույլատրելիությունը պայմանավորված է վիճելի իրավահարաբերության մասնակից հանդիսացող մյուս համապարտ պարտապանների շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Չէ՞ որ վճարման կարգադրության վարույթի շրջանակներում դատարանը գործի ըստ էության քննություն չի իրականացնում, չի քննարկում գործի քննությանն այլ անձանց ներգրավելու հարցը՝ արդյունքում կայացնելով դատական ակտ՝ վճարման կարգադրություն, որն ուղարկվում է բացառապես դիմումում նշված պարտապանին՝ միայն վերջինիս ընձեռելով սահմանված ժամկետում այն վիճարկելու հնարավորություն:

Նշվածի հետ մեկտեղ հարկ ենք համարում նշել, որ ճիշտ կլի ներթույլատրել բոլոր համապարտ պարտապանների դեմ վճարման կարգադրության արձակումն այն դեպքերում, երբ պարտատի-

րոջ կողմից ներկայացված դիմումում նրանք բոլորը նշված են: Նման դեպքերում վճարման կարգադրությունը կուղարկվեր բոլոր համապարտ պարտապաններին, նրանց կընձեռվեր դրա դեմ առարկելու հնարավորություն, իսկ չառարկելու դեպքում վճարման կարգադրությունը ենթակա կլիներ հարկադիր կատարման այն նույն կանոններով, որոնցով կատարվում է համապարտ պարտականություն կրող մի քանի պատասխանողների դեմ ներկայացված հայցը բավարարող վճիռը:

Կարգադրության վարույթի առանձնահատկությունները:

Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը բաղկացած է հետևյալ **երեք փուլերից՝**

- 1) վարույթի հարուցման փուլ,
- 2) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի քննության փուլ,
- 3) արձակված վճարման կարգադրությունն ուժի մեջ մտնելու փուլ:

ՔԴՕ-ի 308-րդ հոդվածի համաձայն՝ վճարման կարգադրություն արձակելու գործն **ընդհատյա** է պարտապանի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին առյանի դատարանին:

Վճարման կարգադրություն արձակելու գործի վարույթը հարուցվում է դրամական պարտավորության շրջանակներում պարտատեր հանդիսացող անձի կողմից դատարան **դիմում** ներկայացնելու միջոցով:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ դիմումը ձևակերպվում է գրավոր և ստորագրվում է դիմումը ներկայացնողի կամ նրա անունից այն ստորագրելու պատշաճորեն ձևակերպված լիազորություն ունեցող անձի կողմից:

ՔԴՕ-ի 309-րդ հոդվածը սահմանում է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ներկայացվող պահանջները: Մասնավորապես վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումում պետք է նշվեն՝

1) առաջին ատյանի դատարանի անվանումը, որին ներկայացվում է դիմումը,

2) դիմողի անունը, հաշվառման վայրի հասցեն, անձնագրային տվյալները, իսկ իրավաբանական անձ դիմողի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, ինչպես նաև դիմողի ֆաքսի, հեռախոսի համարը կամ էլեկտրոնային հասցեն,

3) պարտապանի անունը (անվանումը) և հաշվառման⁴⁴ (գտնվելու) վայրի հասցեն,

4) հիմնական և լրացուցիչ պահանջների հիմքն ու չափը՝ առանձին-առանձին,

5) պահանջը հաստատող ապացույցները,

6) պահանջ՝ վճարման կարգադրություն արձակելու մասին,

7) հայտարարություն առ այն, որ պահանջը կապված չէ դեռևս չկատարված հանդիպակաց պարտավորությունների հետ, կամ հանդիպակաց պարտավորություններն արդեն կատարված են,

8) կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը⁴⁵:

⁴⁴ ՔԴՕ 309-րդ հոդվածում օգտագործվում է «բնակության վայրի հասցե» կապակցությունը, մինչդեռ պետք է նշվեր «հաշվառման վայրի հասցե», քանի որ դիմումի ընդդատության հարցը կարգավորելիս օրենսդիրը հիմք է ընդունել պարտապանի հաշվառման վայրը: Ընդհանուր կանոնի ուժով, հաշվառման վայրի փոխարեն բնակության վայրը պետք է նշել այն դեպքերում, երբ կողմը չունի հաշվառման վայր (ՔԴՕ 121 հոդվ., մաս 2, կետ 3):

⁴⁵ Հարկ է նշել, որ Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 2006 թ. դեկտեմբերի 12-ին ընդունված «Վճարման եվրոպական կարգադրության մասին» թիվ 1896/2006 կանոնակարգով նախատեսվում է, որ վճարման կարգադրության դիմումները, ինչպես նաև արձակված կարգադրության դեմ ներկայացվող առարկությունները ներկայացվում են կանոնակարգի կից սահմանված ձևաթղթերը լրացնելու միջոցով: Հետևելով կանոնակարգի պահանջներին՝ Եվրոպական միության մի շարք երկրներ ազգային մակարդակում ևս դատական իշխանության պաշտոնական կայքերում հրապարակել են վճարման կարգադրություն արձակելու դիմումների, դրանց դեմ ներկայացվող առարկությունների ձևաթղթեր, իսկ դատավարական օրենսդրություններով էլ սահմանել են այդ ձևաթղթերը լրացնելու միջոցով (հաճախ միայն էլեկտրոնային եղանակով) դրանք ներկայացնելու պահանջ: Նման մոտեցումը, անկասկած,

Դիմումին կցվում են պահանջը հաստատող ապացույցները: Եթե պարտավորությունն ապահովված է գրավով, և դիմումատուն ցանկանում է հանդես գալ որպես գրավով ապահովված պարտատեր, ապա դիմումին պետք է կցվի նաև գրավի պայմանագիրը: Ներկայացուցչի կողմից ստորագրվելու դեպքում դիմումին պետք է կցվի նրա լիազորությունը հաստատող համապատասխան փաստաթուղթ:

«Պետական տուրքի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետով քննարկվող վարույթի կարգով դատարան դիմելիս **դիմողն ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից**: Հետևում է, որ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումին, ըստ գործող իրավակարգավորման, պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր կամ պետական տուրքի գծով արտոնություններ տրամադրելու վերաբերյալ միջնորդություններ չեն կցվում⁴⁶:

բավականին հեշտացնում է ոչ միայն անիրագեկ քաղաքացիների կողմից իրենց իրավունքների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը, այլ նաև թեթևացնում է դատարանների գործը՝ նրանց զերծ պահելով ավելորդ փաստաթղթաշրջանառությունից, անհարկի ծավալուն կամ անկանոն շարադրված փաստաթղթերն ընթերցելու անհրաժեշտությունից, միևնույն ժամանակ թույլ է տալիս վճարման կարգադրության վարույթներով փաստաթղթաշրջանառությունն ամբողջովին տեղափոխել էլեկտրոնային հարթակ՝ վարույթը դարձնելով շատ ավելի արագ, արդյունավետ և նվազ ծախսատար:

⁴⁶ Կարծում ենք, որ «Պետական տուրքի մասին» օրենքով նպատակահարմար կլինի առնվազն մի շարք սուբյեկտների համար սահմանել վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելու համար պետական տուրք: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանների վարույթում գտնվող վճարման կարգադրություններ արձակելու դիմումների ճնշող մեծամասնությունը (շուրջ 80%-ը) ներկայացվում է բանկերի, վարկային և հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող, էներգա-, գազա- և ջրամատակարարում իրականացնող մասնավոր կազմակերպությունների կողմից: Միայն 2018 թ. ընթացքում դա կազմել է ավելի քան 50.000 դիմում: Իրավաչափ հարց է առաջանում, թե ինչու՞ պետությունը՝ ի դեմս դատական համակարգի, պետք է անվճար ծառայություններ մատուցի նշված կազմակերպություններին: Եթե խնդիրը զուտ վճարման կարգադրության գործիքակազմի կիրառումը խրախուսելու մեջ է, կարծում ենք, որ խթանիչ նշանակություն կունենա նաև փոքր դրույքաչափը (օրինակ՝ բազային տուրքի չա-

Քանի որ վճարման կարգադրություն արձակելու դեպքում դիմումը և կից փաստաթղթերը դրա հետ մեկտեղ պետք է ուղարկվեն պարտապանին, ՔԴՕ-ի 309-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ նշված փաստաթղթերը դատարան են ներկայացվում երկու օրինակից⁴⁷:

ՔԴՕ-ը սահմանել է վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ **դիմումների քննության երկշաբաթյա ժամկետ**: Ընդ որում՝ առաջին ատյանի դատարանը դիմումը քննում է **առանց դատական նիստ հրավիրելու** (ՔԴՕ 311 հոդվ., մաս 1):

Դիմումի քննության արդյունքներով դատարանը պետք է ձեռնարկի հետևյալ գործողություններից մեկը՝

ա) արձակի վճարման կարգադրություն,

բ) ամբողջովին մերժի վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը,

գ) մասամբ մերժի վճարման կարգադրություն արձակելու դիմումը՝ մյուս մասով արձակելով վճարման կարգադրություն:

Հարկ է նկատի ունենալ, որ դիմումն ամբողջովին կամ մասամբ մերժելու դեպքում դատարանը պետք է կայացնի վճարման կարգադրություն արձակելու դիմումը համապատասխանաբար ամբողջովին կամ մասամբ մերժելու մասին որոշում:

ՔԴՕ-ում էապես ընդլայնվել և հստակեցվել են վճարման կարգադրություն արձակելու մասին **դիմումը մերժելու հիմքերը**: Մաս-

փով): Սակայն ընդհանրապես պետական տուրքից ազատելը, մեր կարծիքով, ոչնչով հիմնավորված չէ, պետական բյուջեի վրա առաջացնում է անհարկի ծանրաբեռնվածություն, գուցե նաև նպաստում է դատարանների գերծանրաբեռնվածության առաջացմանը, քանի որ չի «աշխատում» պետական տուրքի կանխարգելիչ գործառույթը:

⁴⁷Սահմանված պահանջը խնդրահարույց է այն իմաստով, որ կիրառելի չէ էլեկտրոնային եղանակով վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելու դեպքերի նկատմամբ: Մեր կարծիքով, այն համահունչ չէ ՔԴՕ 99-րդ հոդվածի 4-րդ մասին, ըստ որի՝ դատավարության մասնակիցները և այլ անձինք սույն օրենսգրքով նախատեսված գրավոր փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, հայցադիմումի պատասխան, միջնորդություն և այլն) կարող են դատարան ներկայացնել առձեռն, էլեկտրոնային եղանակով կամ փոստով:

նավորապես 310-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ դիմումը մերժվում է այն մասով, որով՝

1) այն չի համապատասխանում ՔԴՕ-ի 307-րդ, 308-րդ կամ 309-րդ հոդվածների դրույթներին (այն է՝ ներկայացվել է ընդդատության, վարույթի թույլատրելիության կամ դիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջների խախտմամբ),

2) առկա է ՔԴՕ-ի 126-րդ կամ 127-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկը (այն է՝ առկա է հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու այնպիսի հիմք, որը, հաշվի առնելով կարգադրության վարույթի էությունը, կիրառելի է դրա նկատմամբ),

3) պահանջն առերևույթ հիմնավորված չէ,

4) պահանջի հիմքում ընկած գործարքն առերևույթ հակասում է օրենքին,

5) առկա է նույն անձանց վերաբերյալ, միևնույն փաստական հիմքերով և միևնույն պահանջի վերաբերյալ վճարման կարգադրություն արձակելը մերժելու մասին որոշում:

Հարկ է նկատել, որ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ որոշումը խոչընդոտ չէ մերժված մասով պահանջը հայցային վարույթի կարգով ներկայացնելու համար (310 հոդվ., մաս 2):

Վճարման կարգադրություն արձակելու դիմումն ամբողջովին մերժելու մասին որոշում չկայացնելու դեպքում դատարանն արձակում է վճարման կարգադրություն, որը դիմումի և կից փաստաթղթերի կրկնօրինակների հետ մեկտեղ ոչ ուշ, քան արձակվելու հաջորդ օրն ուղարկվում է պարտապանին (312 հոդվ., մաս 2):

Նախկին ՔԴՕ-ի 204.4 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելուց առաջ դատարանը դիմողին պետք է հնարավորություն տար արտահայտելու իր դիրքորոշումը, այդ թվում՝ հեռակա կարգով (ֆաքս, էլեկտ-

րոնային փոստի միջոցներ և այլն): Հաշվի էր առնվում այն, որ դիրքորոշում արտահայտելու հնարավորությունը գործնականում կարող է օգտագործվել պահանջը հիմնավորող լրացուցիչ փաստեր և ապացույցներ ներկայացնելու, պարտապանի՝ դիմումում նշված հասցեն ճշգրտելու, դիմումում առկա այլ թերություններ վերացնելու համար:

Քանի որ գործող ՔԴՕ-ը պատշաճ դիմում ներկայացնելու բեռն ամբողջովին դրվել է պարտատիրոջ վրա, իսկ դիմումի թվարկված արատները դիտարկել է որպես այն մերժելու հիմք, նոր կարգավորումներով դատարանն ազատվել է դիմումը մերժելուց առաջ դիմողի դիրքորոշումը ստանալու անհրաժեշտությունից:

Նույն տրամաբանությամբ դատարանն ազատվել է նաև պատասխանողի հասցեի սխալ լինելու պատճառաբանությամբ վճարման կարգադրությունը դատարանի գրասենյակ վերադարձվելու դեպքում այդ մասին դիմողին տեղեկացնելու, պարտատիրոջը պարտապանի հասցեն ճշգրտելու հնարավորություն տալու և ճշգրտված հասցեով արձակված վճարման կարգադրությունը կրկին ուղարկելու պարտականությունից (վերջինս նախատեսված էր «ՀՀ դատարանների կողմից վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգը հաստատելու մասին» ԴՆԽ 21.02.2006 թ. թիվ 91 որոշման 8.1-8.3 կետերով⁴⁸):

Վճարման կարգադրությունը: ՔԴՕ-ը վճարման կարգադրության հասկացությունը չի սահմանում, ի տարբերություն ՌԴ ՔԴՕ-ի, որի 121-րդ հոդվածում դատական հրամանը սահմանվում է որպես դատական որոշում, որը կայացվում է դատավորի կողմից միանձնյա, օրենսգրքով նախատեսված պահանջներով պարտապանից դրամական գումարներ բռնագանձելու կամ շարժական գույք վերցնելու վերաբերյալ դիմումների հիման վրա:

Հաշվի առնելով կարգադրության վարույթի առանձնահատ-

⁴⁸ Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=33796>:

կությունները՝ **վճարման կարգադրությունը կարելի է բնորոշել որպես պարտապանից որոշակի դրամական գումարներ բռնագանձելու պահանջով դիմումի հիման վրա դատարանի կողմից միանձնյա, առանց դատական նիստ հրավիրելու և առանց պահանջի հիմնավորվածությունն ըստ էության ստուգելու կայացվող դատական ակտ**⁴⁹:

ՔԴՕ-ի 312-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում են վճարման կարգադրության **բովանդակությանը ներկայացվող պահանջները**: Մասնավորապես վճարման կարգադրությունը պետք է պարունակի՝

1) նշում առ այն, որ առաջին ատյանի դատարանն ըստ էության չի ստուգել պահանջի հիմնավորվածությունը,

2) կարգադրություն՝ երկու շաբաթվա ընթացքում կատարելու հետևյալ գործողություններից որևէ մեկը՝

ա. կատարել վճարման պահանջը, եթե պարտապանը պահանջը հիմնավորված է համարում,

բ. առաջին ատյանի դատարան ներկայացնել գրավոր առարկություն, եթե պարտապանը ներկայացված պահանջը մի մասով համարում է չհիմնավորված՝ մյուս մասով կատարելով վճարման պահանջը,

գ. առաջին ատյանի դատարան ներկայացնել գրավոր առարկություն, եթե պարտապանը ներկայացված պահանջը համարում է չհիմնավորված,

3) նշում այն մասին, որ առարկություն ներկայացնելու դեպքում պահանջի վիճարկված մասը կարող է քննվել ըստ էության հայցալին վարույթի կարգով, որի դեպքում պարտվող կողմը կրելու է դատական ծախսերը,

4) նշում այն մասին, որ վճարման կարգադրությունն ստանալու

⁴⁹ Վճարման կարգադրության իրավական բնույթի մասին ավելի մանրամասն տե՛ս **Մեղոյան Ս. Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 54-70:

պահից երկշաբաթյա ժամկետում առարկություն չներկայացնելու դեպքում վճարման կարգադրությունն ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման:

Վճարման կարգադրությունը վերացնելու հիմքերը և կարգը:

Դատավարագիտության մեջ տեսակետ է արտահայտվում, որ դատական հրամանը, վճռի հետ շատ ընդհանրություններ ունենալով հանդերձ, նրա տարատեսակ չի և ունի ավելի նվազ իրավաբանական ուժ, քան վճիռը, որովհետև դատավարական օրենսդրությունը նախատեսում է դրա վերացման պարզեցված կարգ⁵⁰: Եվ իրոք, եթե **պարտապանը վճարման կարգադրությունը սրանալու պահից երկշաբաթյա ժամկետում ներկայացնում է առարկություն**, կարգադրությունն արձակած դատարանը որոշում է կայացնում այն վերացնելու մասին (313 հոդվ., մաս 1, կետ 1):

Ի տարբերություն նախկին ՔԴՕ-ի 204.7 հոդվածի՝ ՔԴՕ-ի 313-րդ հոդվածով սահմանվել են արձակված վճարման կարգադրությունը վերացնելու ևս երկու հիմքեր:

1) Դատարանը վերացնում է վճարման կարգադրությունը, եթե **պարտապանը կատարել է վճարման պահանջը**: Հարկ է նկատի ունենալ, որ արձակված վճարման կարգադրությունը տվյալ հիմքով կարող է վերացվել այն դեպքերում, երբ պահանջը կատարվել է վճարման կարգադրությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում: Եթե նույն ժամկետում պարտապանը վճարման կարգադրության դեմ ներկայացնում է առարկություն՝ հիմքում դնելով մինչև վճարման կարգադրություն արձակելը պահանջը կատարած լինելու փաստը, վճարման կարգադրությունը պետք է վերացվի ոչ թե քննարկվող, այլ 313-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով: Ինչ վերաբերում է այն իրավիճակներին, երբ կարգադրության առարկա պահանջը կատարվում է կամ այն կատարելու փաստը հավաստող փաստաթղթերը դատարան են ներկայաց-

⁵⁰ Ст'я Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. М. С. Шакарян, М.: изд. «Кодекс», 2003, էջ 243:

վում օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետն անցնելուց հետո, ապա այդ դեպքերում վճարման կարգադրություն արձակած դատարանը չի կարող վերացնել այն, քանի որ պարտապանի կողմից վճարման կարգադրությունն ստանալու օրվանից երկու շաբաթվա ընթացքում դատարանում առարկություն չստացվելու դեպքում վճարման կարգադրությունն ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ (314 հոդվ.), այդ թվում՝ դառնում է անփոփոխելի⁵¹: Ասվածը նշանակում է, որ դատարանը պարտատիրոջ պահանջով պետք է տա կատարողական թերթ: Այլ է խնդիրը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով կատարողական վարույթը ենթակա է կարճման, քանի որ կատարողական թերթը փաստացի կատարվել է:

2) Դատարանը վերացնում է վճարման կարգադրությունը, եթե ***անհնարին է դիմումում նշված հասցեով վճարման կարգադրությունը պարտապանին առաքելը***: ՔԴՕ-ի 314-րդ հոդվածի համաձայն՝ արձակված վճարման կարգադրությունը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ, եթե պարտապանի կողմից վճարման կարգադրությունն ստանալու օրվանից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դատարանը չի ստանում առարկություն: Ակնհայտ է, որ վճարման կարգադրության դեմ առարկելու իրավունքն իրացնելու կարևորագույն նախապայմանը պարտապանի կողմից արձակված կարգադրությունը ստանալն է, դրա մասին պատշաճորեն իրազեկված լինելը: Եթե ինչ-ինչ պատճառներով դիմումում նշված հասցեով վճարման կարգադրությունը պարտապանին առաքել չի հաջողվում և որպես հետևանք՝ պարտապանը չի տեղեկացվում իր վերաբերյալ վճարման կարգադրություն արձակելու մասին, զրկված է լինում դրա դեմ առարկելու իրավունքն իրացնելու հնարավորությունից, արձակված վճարման կարգադրությունն օրինական ուժի մեջ մտնել

⁵¹ Վճռի օրինական ուժի մեջ մտնելու իրավական հետևանքների մասին մանրամասն տե՛ս **Մեղրյան Ս. Գ.**, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 152-164:

չի կարող:

Վճարման կարգադրությունը պարտապանին առաքելու անհնարինության փաստը դատարանին հայտնի դառնալու պահից վերջինս իր նախաձեռնությամբ պետք է որոշում կայացնի այն վերացնելու մասին: Բնականաբար, որպես քննարկվող հանգամանքը հաստատող ապացույց կարող է դիտարկվել փոստի մարմիններից ստացված հետադարձ ծանուցումն այն մասին, որ նշված հասցեում նման անձ չի բնակվում, նման հասցե գոյություն չունի, այն թերի է և այլն:

Վճարման կարգադրության օրինական ուժի իրավական հետևանքները: Ինչպես նշվել է, այն դեպքում, երբ պարտապանի կողմից վճարման կարգադրության ստացման մասին հետադարձ ծանուցումը ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում դատարանն առարկություն չի ստանում կամ ստանում է առարկություն, որը պատասխանողն ուղարկել է երկշաբաթյա ժամկետի խախտմամբ, ապա վճարման կարգադրությունը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման: Այդուհանդերձ, օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալը չի նշանակում, որ վճարման կարգադրության և օրինական ուժի մեջ մտած վճռի իրավական հետևանքները նույնական են: Վճարման կարգադրության օրինական ուժի հետևանքները փոքր-ինչ այլ են և՛ կազմով, և՛ բովանդակությամբ, ինչը պայմանավորված է նրա իրավական բնույթով:

Օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճարման կարգադրությունը ձեռք է բերում **անհերքելիություն**: Ի տարբերություն վճռի՝ վճարման կարգադրության անհերքելիությունը ծագում է ոչ թե դատական ակտը բողոքարկելու իրավական բոլոր միջոցները սպառվելուց, այլ սահմանված ժամկետում դրա վերաբերյալ առարկություններ չստանալու դեպքում:

Օրինական ուժի մեջ մտած վճարման կարգադրությանը հատուկ է նաև **բացառիկություն** հատկանիշը: ՔԴՕ-ով օրինական ու-

Ժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունները դիտարկվել են որպես եզրափակիչ դատական ակտեր (հոդվ. 5, մաս 2): Միևնույն ժամանակ, ըստ ՔԴՕ-ի 126-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի առկայությունը սահմանվել է որպես համապատասխանաբար հայցադիմումի ընդունումը մերժելու և գործի վարույթը կարճելու հիմք:

Վճարման կարգադրությունը, ինչպես բոլոր այլ դատական ակտերը, օժտված է **պարտադիրության** և **կապարելիության** հատկանիշներով: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ ՔԴՕ-ի 5-րդ հոդվածում որևէ բացառություն վճարման կարգադրության պարտադիրության և կատարելիության կապակցությամբ չի սահմանվում: Դեռ ավելին, սահմանվում է, որ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունը ենթակա է հարկադիր կատարման (ՔԴՕ 314 հոդվ.): Դրանով էլ պայմանավորված է այն, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 2-րդ հոդվածում վճարման կարգադրությունը ևս դիտարկվում է որպես հարկադիր կատարման ենթակա դատական ակտ (կատարման հիմք), որի հիման վրա դատարանը տալիս է կատարողական թերթ:

Ի տարբերություն վճռի՝ վճարման կարգադրությանը հատուկ չէ **նախադարձիությունը**, քանի որ կարգադրության վարույթում դատարանը պահանջի հիմնավորվածությունն ըստ էության չի ստուգում, գործի դատաքննություն չի իրականացնում և, հետևաբար, որոշակի փաստական հանգամանքներ վճարման կարգադրությամբ չի հաստատում և դրա հիմքում չի դնում՝ ելնելով այն ենթադրությունից, որ դիմողի կողմից ներկայացված հանգամանքները և ապացույցները արժանահավատ են: Այդպիսի ենթադրությունը, հետևաբար նաև՝ դատական ակտի իրավաչափությունը կարող

է հերքվել առարկությունների ներկայացման փաստի ուժով: Նույն տրամաբանությամբ էլ այդ ենթադրությունը կարող է հաստատվել սահմանված ժամկետում առարկություններ չներկայացնելու փաստի ուժով: Վերջին հանգամանքը մի շարք հեղինակների հիմք է տվել կարծիք հայտնելու, որ չհերքված փաստերը պետք է դիտարկել հաստատված և նախադատելի նշանակություն ունեցող:⁵² Սակայն, մեր կարծիքով, նման դիրքորոշումն այնքան էլ համոզիչ չի թվում, քանի որ փաստը չհերքելը կամ չվիճարկելը փաստն անվիճելի չի դարձնում: Ինչ վերաբերում է փաստն ընդունելուն, որի արդյունքում ընդհանուր կանոնի ուժով այն դառնում է անվիճելի (ՔԴՕ-ի 61 հոդվ., մաս 5), ապա պետք է նկատի ունենալ, որ դա դեռ չի նշանակում, որ դատարանը սահմանված դատավարական ձևի պահանջների պահպանմամբ այն հետազոտել և հաստատված է համարել: Ընդհանուր կանոնի համաձայն՝ ընդունված փաստը դատարանը կարող է հաստատված համարել, եթե չկան ողջամիտ կասկածներ, որ կողմն այն չի ընդունել խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ճշմարտությունը թաքցնելու կամ ոչ իրավաչափ գործողություններ քողարկելու նպատակով (61 հոդվ., մաս 5): Ակնհայտ է, որ կարգադրության վարույթում դատարանը չունի նման կասկածները ստուգելու, չվիճարկվող փաստերը գործի այլ հանգամանքների հետ համադրելու հնարավորություն: Հետևաբար, վճարման կարգադրությունն արձակելու հիմք հանդիսացած առերևույթ արժանահավատ հանգամանքներին նախադատելի նշանակություն վերապահելը, մեր կարծիքով, արդարացված չէ:

Վճարման կարգադրությունը բողոքարկելու հիմքերը և կարգը: Ի տարբերություն նախկին ՔԴՕ-ի, որը չէր նախատեսում օրինական ուժի մեջ մտած վճարման կարգադրությունը բողոքարկելու

⁵² Ст'ю Загайнова С. К., Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс... д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 404:

հնարավորություն, գործող ՔԴՕ-ը նման հնարավորություն սահմանել է, սակայն որոշակի առանձնահատկություններով:

Վճարման կարգադրությունը բողոքարկելու հնարավորություն նախկին օրենսգրքով չնախատեսելը հիմնականում պայմանավորված էր այն իրողությամբ, որ, ինչպես և ներկայումս, նախատեսված էր օրինական ուժի մեջ մտած վճարման կարգադրությունը վիճարկելու և վերացնելու պարզեցված կարգ, որն իր հերթին հիմնավորվում է կարգադրության վարույթի պարզեցված բնույթով: Սահմանված ժամկետում պարտապանի կողմից վճարման կարգադրությունը չվիճարկելու դեպքում արձակված վճարման կարգադրությունը ձեռք է բերում վերջնական դատական ակտի ուժ, ինչի արդյունքում այն չի կարող վերանայվել նույնիսկ վերադաս դատական ատյանի կողմից:

Վճարման կարգադրության անբողոքարկելիությունը գործնականում մի շարք խնդիրներ էր առաջացնում հատկապես այն դեպքերում, երբ դատարանի բացթողումների, փոստի մարմինների ոչ պատշաճ աշխատանքի կամ այլ պատճառներով պարտապանն իր դեմ արձակված կարգադրության մասին սահմանված ժամկետում չէր ծանուցվում կամ ծանուցվում էր ուշացումով: Նման դեպքերում կա՛մ վճարման կարգադրության դեմ առարկություն չէր ներկայացվում, կա՛մ այն ստացվում էր սահմանված ժամկետն անցնելուց հետո, և առարկություն ներկայացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու փաստի ուժով վճարման կարգադրությունը մտնում էր ուժի մեջ:

Հաշվի առնելով այն, որ վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի ընթացակարգում միայն պարտապանի առարկությունն է արգելակում վճարման կարգադրության օրինական ուժ ստանալը և հարկադիր կատարումը՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային ակտերով արձանագրել է, որ վճարման կարգադրություն արձակելու մասին պատասխանողին ոչ պատշաճ ծանուցելը խոչընդոտում է պատասխանողի (պարտապանի)՝ այն վիճարկելու

իրավունքի իրականացմանը, կոպտորեն խախտում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը և բավարար հիմք է գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ ստացած վճարման կարգադրությունը բեկանելու համար⁵³:

Ներկայացված իրավիճակները գործնականում բացառելու նկատառումներից ելնելով՝ ՔԴՕ-ում ոչ միայն նախատեսվել է արձակված կարգադրությունը վերացնելու դատարանի պարտականությունն այն դեպքերում, երբ անհնարին է դիմումում նշված հասցեով վճարման կարգադրությունը պարտապանին առաքելը, այլ նաև սահմանվել է վճարման կարգադրության դեմ **վերաքննիչ բողոք բերելու պարտապանի իրավունքը** (360 հոդվ., մաս 3): Ընդ որում՝ պարտապանը վճարման կարգադրության դեմ վերաքննիչ բողոք կարող է բերել մեկ ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ իմացել է կամ կարող էր իմանալ արձակված վճարման կարգադրության մասին (362 հոդվ., մաս 3):

Հաշվի առնելով կարգադրության վարույթի պարզեցված բնույթը՝ ՔԴՕ-ով սահմանվել են վճարման կարգադրության դեմ ներկայացված վերաքննիչ **բողոքի քննության կրճատ ժամկետ և պարզեցված կարգ**: Մասնավորապես, ըստ 377-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վերաքննիչ դատարանը վճարման կարգադրության դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ **երկշաբաթյա ժամկետով**: Ընդ որում՝ վարույթ ընդունված բողոքը քննվում և դրա վերաբերյալ որոշումը կայացվում է **գրավոր ընթացակարգով**՝ առանց դատական նիստ իրավիրելու⁵⁴:

⁵³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ3/0627/03/09 գործով 02.04.2010 թ. որոշումը, ՀՀՊՏ 2010.06.01/22(756).1, թիվ ՎԴ1/0522/05/09 գործով 01.10.2010 թ. որոշումը, ՀՀՊՏ 2010.12.01/60(794):

⁵⁴ Թեև ՔԴՕ 374-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ վճարման կարգադրության դեմ ներկայացված բողոքը կարող է քննվել նաև դատական նիստում, կար-

ՔԴՕ-ով նախատեսվել են վճարման կարգադրության դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության հետ կապված վերաքննիչ դատարանի հատուկ **լիազորություններ**: Ըստ ՔԴՕ-ի 380-րդ հոդվածի 4-րդ մասի՝ վճարման կարգադրության դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ վճարման կարգադրությունը թողնելով օրինական ուժի մեջ, կամ բավարարելով վերաքննիչ բողոքը՝ վերացնում է վճարման կարգադրությունը:

Հարկ է նկատի ունենալ նաև այն, որ ՔԴՕ-ով սահմանված է վճարման կարգադրության դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումն **օրինական ուժի մեջ մտնելու** և, համապատասխանաբար, **այն բողոքարկելու կրճատ ժամկետ**: Ըստ ՔԴՕ-ի 387-րդ հոդվածի 1-ին մասի՝ բացի վճարից՝ այլ եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից 15 օր հետո:

Վճարման կարգադրության դեմ բերված բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած որոշումները հրապարակելու, գործին մասնակցող անձանց ուղարկելու, վճարեկության կարգով բողոքարկելու հատուկ կանոններ ՔԴՕ-ով չեն նախատեսվել:

ծում ենք, որ վճարման կարգադրության դեմ բերված բողոքները երկշաբաթյա ժամկետում քննելու և լուծելու վերաբերյալ պահանջի առկայության պայմաններում նշված ժամկետում դատական նիստ հրավիրելը և այդ մասին գործին մասնակցող անձանց ծանուցելը գործնականում անիրատեսական է: Մեր կարծիքով, հաշվի առնելով քննարկվող վարույթի շրջանակներում դատական նիստ հրավիրելու աննպատակահարմարությունը (դատարանը պետք է ստուգի միայն ծանուցման փաստը), ճիշտ կլիներ 374-րդ հոդվածում ուղղակիորեն սահմանել, որ վճարման կարգադրության դեմ բերված բողոքները քննվում են գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԵՂՐՅԱՆ

**ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
(գիտագործնական մեկնաբանություն)**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումջյանի

Չափսը՝ 60x84 1/16:

Տպ. մամուլը՝ 5.125:

ԵՊՀ հրատարակչություն
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



ԿՐԻՄԻՆԱԼԻ ՏՐԱՏՈՐԻԱ
ԵՐԵՎԱՆ 2020
publishing.ysu.am